Երեքշաբթի
15 օգոստոսի 2023թ.
№ 13 (601)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Արցախցիները՝ ցեղասպանության և հայրենազրկման վտանգին դեմ հանդիման

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ Արցախից Հայաստան բուժման նպատակով տեղափոխվող 68-ամյա Վագիֆ Խաչատրյանը հուլիսի 29-ին Լաչինի միջանցքի Հագարիի անցակետում առևանգվել է Ադրբեջանի սահմանապահ ծառայության ներկայացուցիչների կողմից և տեղափոխվել Բաքու:

Ավելի ուշ Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարել է. *«Ինչպես նշված է Ադրբեջանի գլխավոր դատախազության տեղեկատվության մեջ, 1991 թվականի դեկտեմբերի 22-ին Վագիֆ Չերքեզովիչ Խաչատրյանը հայկական զինված կազմավորումների խմբի կազմում Խոջալուի շրջանի Մեշալի գյուղում իրականացրել է ադրբեջանական բնակչության ջարդ: Ջարդի ժամանակ սպանվել է 25, վիրավորվել 14, արտաքսվել 358 ադրբեջանցի: Վագիֆ Չերքեզովիչ Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել ԱՀ քրեական օրենսգրքի 103 (ցեղասպանություն) և 107 (դեպորտացիա կամ բնակչության բռնի տեղահանում) հոդվածներով, և դատարանի կողմից նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, և հենց այս քրեական գործի շրջանակում նա հուլիսի 29-ին Հայաստան գնալու ճանապարհին բերման է ենթարկվել սահմանային անցակետում»:*

Ըստ Արցախի Հանրապետության պետնախարարի խորհրդական Արտակ Բեգլարյանի՝ Վագիֆ Խաչատրյանը բոլոր տղամարդկանց նման պաշտպանել է իր հայրենիքը 1991-94 թթ. պատերազմում: Սակայն Ադրբեջանի մեղադրանքները կեղծ են, քանի որ նման հանցագործություն Մեշալի գյուղում տեղի չի ունեցել:

Այն, ինչ կատարվել է Վագիֆ Խաչատրյանի հետ, կարող է տեղի ունենալ հազարավոր հայերի հետ. Արցախի Հանրապետության չափահաս բնակչության մեծագույն մասը, ինչպես և Հայաստանի Հանրապետության տասնյակ հազարավոր քաղաքացիներ մասնակցել են Արցախյան երեք պատերազմին. մի՞թե բոլորին նման ճակատագիր է սպասվում... //

Ագարակի պղնձամոլիբդենայինի նոր ղեկավարն է Ալեքսանդր Բելյաևը

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում գլխավոր տնօրենի փոփոխություն է տեղի ունեցել: Հունիսի 5-ից ընկերության ղեկավարումը ստանձնել է Ալեքսանդր Գրիգորևիչ Բելյաևը: Օգոստոսի 8-ին ճեպազրույց ունեցանք նորանշանակ տնօրենի հետ:

– Ալեքսանդր Գրիգորևիչ, նախ շնորհավորում ենք «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավարումը ստանձնելու առիթով և Ձեզ հաջողություններ ցանկանում: Երկու ամսից ավելի է՝ ընկերության ղեկին եք, առաջին տպավորությունները:

– Ագարակի ՊՄԿ-ն Հայաստանի հանքարդյունաբերության առաջատար ձեռնարկություններից է: Ձեռնարկության աշխատանքը պլանավորված է ինչպես միջնաժամկետ (1-3 տարի), այնպես էլ երկարաժամկետ (5-10 տարի) հեռանկարով: Խնդիրները, որ դրված են ընկերության ղեկավարության առջև, և դրանց լուծման ուղիները, հնարավորություն են տալիս ազնվորեն կանխատեսել ձեռնարկության զարգացումը: Աշխատանքներ են նախատեսվում հարստացուցիչ ֆաբրիկայում հնացած սարքավորումների փոխարինման, տրանսպորտային միջոցների անձնակազմի և այլոց համար աշխատանքային հարմարավետ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

– Ոչ սովորական ժամանակներ ենք ապրում, որը չի կարող անդրադարձներ չունենալ նաև մեր հանրապետության խոշոր տնտեսվարողների գործունեության վրա: Կարողանո՞ւմ եք հաղթահարել օրինաչափ դժվարությունները, որ առկա են հատկապես առաքման ու մատակարարման և ընդհանրապես լոգիստիկ ոլորտներում:

– Լոգիստիկ խնդիրներ չկան, կոմերցիոն ծառայությունը հետևում է գործընթացներին: Խնդիրներն արագ հարթվում են, և կարելի է ասել՝ արտառոց ոչինչ չկա: Այն պլանները, ծրագրերը, որոնք տարվա կտրվածքով նախանշվել էին, կատարվում են:

– Սովորաբար, երբ որևէ խոշոր ընկերության ղեկավարը փոխվում է, նոր տնօրենը գալիս է իր թիմով կամ իր գաղափարակիցներով ու համախոհներով:

Ագարակի պղնձամոլիբդենային ընկերությունում տարիներ ի վեր կադրային և հատկապես ինժեներատեխնիկական պրոֆեսիոնալ անձնակազմ է ձևավորվել, ենթադրում ենք՝ այդ մարդկանց հետ կշարունակեք Ձեր գործունեությունը, թե՞...

– Ինձ բաժին հասավ ուժեղագույն և փորձառու թիմ: Գործող թիմի անդամները՝ հիմնականում, աշխատում են երկար տարիներ, ինքս էլ կաշխատեմ նրանց հետ: Նորամուծություններ, այո, կլինեն կառավարման ոլորտում, ավտոմատացման համակարգում:

– Անշուշտ, լեռնահանքային արդյունաբերությունը սերտորեն առնչվում է բնապահպանության հետ: Ինչպե՞ս եք գնահատում բնապահպանական իրավիճակը՝ Ձեր ղեկավարած ընկերության գործունեության համապատկերի վրա, և որո՞նք են (ըստ Ձեզ) ընկերության առաջնահերթ խնդիրներն այդ ոլորտում:

– Աշխատանքի անվտանգության, բնապահպանության խնդիրներն ինձ համար, որպես ղեկավարի, առաջնահերթ տեղ են զբաղեցնում: Որքան ուսումնասիրել եմ իրավիճակը, բնապահպանական լուրջ խնդիրներ չկան: Այդ առումով խնդիր է դրվել որոշ գործընթացներ ավտոմատացնել, որպեսզի նվազագույնի հասցվի մարդկային գործոնը:

– Սոցիալական բազմաթիվ խնդիրներ ունեցող Սյունիքի մարզում, նաև Մեղրու տարածաշրջանում չափազանց կարևոր է բնակչության զբաղվածության խնդիրը: Կարո՞ղ ենք առաջիկայում ակնկալիքներ ունենալ նոր աշխատատեղերի ստեղծ-

Շարունակությունը՝ էջ 2

«... Եթե կորցնենք Արցախը, ապա մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը»

Մոնթե Մելքոնյան

Մտահոգիչ ու անհասկանալի է անտարբերության այն մթնոլորտը, որ տիրում է Մայր հայրենիքում և սփյուռքում

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի պատգամը Աստվածամոր վերափոխման տոնի առթիվ:

«Խոնարհությունը մայրն է բոլոր առաքինությունների, իսկ խոնարհության անդրանիկ որդին է Աստծո երկյուղը:

Սիրելի հավատավոր քույրեր և եղբայրներ,

Ամենառաջին իրողությունը, որ գալիս է մեր մտքին Աստվածամոր մասին մտածելուց, Խոնարհությունն է:

Այսօր վերստին համախմբվել ենք միասնաբար տոնելու մեր Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկը՝ Աստվածամոր Վերափոխման գեղեցիկ տոնը: Ո՞վ է Աստվածամայրը, ո՞վ է այդ խորհրդավոր Կինը, որ հազարամյակներ շարունակ ակնածանք է ներշնչում իր հանդեպ, որ մխիթարում է տառապյալներին ու սրտով բեկյալներին: Իր կատարյալ խոնարհության և Աստծո կամքին ամբողջական հնազանդության շնորհիվ դեռատի այդ աղջնակը արժանացավ Աստծո Միածին Որդու երկրավոր ծնողը լինելու անպատմելի շնորհին: Աստվածամոր կերպարը կենդանի ու ապրված ավետարան է յուրաքանչյուր քրիստոնյայի համար, որովհետև նա էլ իր Որդու նման իր գիտակցական կյանքի ճանապարհը սկսեց Աստծու կամքին հնազանդվելով, սեր և հոգատարություն սփռեց իր շուրջը և Իր Որդու չարչարանքներին ամբողջական կերպով ապրումակցելով՝ արժանացավ երկնային անթառամ պսակի:

Վերափոխման պատմությունը արձանագրված չէ ավետարանների մեջ և մեզ է հասել Սրբազան Ավանդության միջոցով: Ըստ ավանդության, երբ Փրկչի համբարձումից անցավ տասներկու տարի և երբ սուրբ Կույսն արդեն պետք է ննջեր, երեսուն օր առաջ նրա մոտ եկավ Գաբրիել հրեշտակապետը՝ տալով Կույսին երկրից երկինք փոխման ավետիսը: Երբ Աստվածամայրը արդեն պառկած էր մահվան մահճի մեջ, խնդրեց, որ վերջին անգամ պատարագ մատուցեն և Սուրբ Հաղորդություն տան իրեն, ապա շրջապատված առաքյալների բազմությամբ՝ խաղաղությամբ իր հոգին ավանդեց և սենյակը լցվեց երկնային աննկարագրելի անուշահոտությամբ: Երբ Տիրամայրը ննջեց, հավաքվեցին հավատացյալ կանայք ու սուրբ կույսերը և օրենքի համաձայն պատանեցին նրա մարմինը, որպեսզի տանեն Տիրոջ կողմից վաղօրոք նշված վայրը՝ Գեթսեմանի, ապա առաքյալները սաղմոսներով ու օրհնություններով օրհնյալ մարմինը դրեցին գերեզման:

Առաքյալները Տիրամոր թաղումից հետո՝ մի քանի օր ևս մնացին Երուսաղեմում: Սակայն նրանցից մեկը՝ հայոց առաքյալ Բարդուղիմեոսը, ներկա չէր Աստվածամոր ննջման ժամանակ, իսկ երբ նա եկավ ու իմացավ կատարվածը, խիստ վշտացավ, որ չի արժանացել Աստվածամոր տեսությանը և չի ընդունել վերջին օրհնությունը, ինչպես մյուս առաքյալները: Հետո սկսեց աղաչել Պետրոսին և մյուսներին, որ իրեն ցույց տան Աստվածածնի մարմինը: Առաքյալները ահով ու դողով աղոթք արեցին ու հոժարելով կատարեցին իրենց եղբոր փափագը՝ բացեցին գերեզմանը, և այն դատարկ գտան: Այնտեղ էին միայն

Շարունակությունը՝ էջ 2

Մտահոգիչ ու անհասկանալի է անտարբերության այն մթնոլորտը, որ տիրում է Մայր հայրենիքում և սփյուռքում

Սկիզբը՝ էջ 1

Աստվածամոր պատանքները: Նրանք սկզբում խիստ զարմացան, սակայն հետո իմացան, որ Տիրուհին փոխադրվել է դեպի մեծ ու լուսապատիվ փառքը, և հիանալով փառք տվեցին Աստծուն:

Ահա սա է Սբ. Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնի նախապատմությունը, որը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից չորրորդն է և Տիրամորը նվիրված տոներից ամենահինը: Ուրախարար այս օրը հակասական զգացումներ են պատել մեր սիրտն ու հոգին. մի կողմից այն դառը իրականությունը, որ մեր 120,000 հարազատները դեռևս գտնվում են օրեցօր խորացող հումանիտար ճգնաժամի մեջ, մյուս կողմից այն արհեստական խոչընդոտները, որ այսօր խանգարում են մեզ լինելու Արցախում և արցախցիների կողքին:

Եվ ահա այս անհույս թվացող մտածումների միջից մեր առջև է գալիս տառապանքի բովով անցած, իր սիրտը բազում անգամներ խոցված, բայց ի վերջո Հարության հաղթանակը տեսած և մարմնապես երկինք տեղափոխված Աստվածամայրը: Երբ մեր Փրկչին դատապարտեցին խաչի մահվան, գրեթե բոլոր յուրայինները լքեցին Նրան, Մարիամը մինչև վերջ չլքեց իր Որդուն և անգամ իր կյանքին սպառնացող վտանգները անտեսելով՝ հավատարիմ մնաց իր մայրական աստվածատուր բարձր կոչմանը:

Արցախցիների ամենասիրելի խոսքերից մեկը, գոնե վերջին հարյուրամյակում, եղել է Մայր Հայաստան սրտաշարժ արտահայտությունը, որովհետև անարդար կերպով գերեվարված զավակը մշտապես փափագել է վերադառնալ իր հարազատ մոր գիրկը: Մինչև 44-օրյա պատերազմը, կարծես թե հնարավորություն էր ստեղծվել զավակի տունդարձի համար, որովհետև թե՛ Մայրն էր կամենում և թե՛ զավակը: Բայց չարը անդադար աշխատում է, որպեսզի յուրաքանչյուր ամուր ընտանիքի մեջ բաժանում մտցնի, և եթե տան ամեն մի անդամ չի պայքարում ընտանիքի ամրության համար, եթե իր ցանկությունների հարցում չի գնում զիջումների, ապա վաղ թե ուշ ներս է սողոսկում պառակտման չարիքը:

Այս լույսի ներքո բավականին մտահոգիչ ու անհասկանալի է անտարբերության այն մթնոլորտը, որ տիրում է Մայր հայրենիքում և սփյուռքում: Առանձին սրտացավ մարդկանց եթե չհաշվենք, մեծ հաշվով դեռևս չկա այն անհրաժեշտ լրջությունն ու գիտակցումը, որ ամեն մի հայից է կախված մեր երկրի ապագան: Հիսուս իր փառքի մեջ մտնելու համար քայլեց խաչի ճանապարհով, իսկ մի՞թե մենք ուզում ենք դրան հասնել զվարճությունների միջոցով: Այդպիսինները չարաչար սխալվում են՝ մտածելով, թե այս հարցը իրենցը չէ: Երբ Արցախը ազատ էր, բոլորը մեծ ուրախությամբ գալիս էին վայելելու Արցախի բնությունը, բոլորը հպարտանում էին մեր հաղթանակներով, իսկ հիմա ուր են այդ մարդիկ: Միթե Ձեզ միայն առողջ ու անվտանգ հայրենիքն է գրավում, այն դեպքում, որ խոցված երկիրը ավելի շատ կարիք ունի Ձեր սիրո և հոգածության: Այսօր զավակը վիրավոր է և հյուծված, մայրը՝ նույնպես, բայց մենք հավատում ենք, որ Աստվածամոր նման յուրաքանչյուր մայր, եթե չի կտրում իր կապը Աստծո հետ, եթե չի մոռանում իր Մայր լինելը, ապա ի զորու է տեսնելու իր որդու հաղթական Հարությունն ու Վերափոխումը:

Եթե քաղաքականության պարագային չկան մշտական բարեկամներ, այլ կան մշտական շահեր, ապա հոգևոր ոլորտում պատկերը շատ ցավալի է: Ինչու է ամբողջ քրիստոնյա աշխարհը՝ իրենց հովվապետերով հանդերձ աչք փակում հերթական անգամ արդարության խաչելության վրա: Որպես Քրիստոսի Սուրբ Խորանի համեստ սպասավոր, մեր խնդրանքն ու հորդորն է քրիստոնեական բոլոր եկեղեցիներին. *«Ձեր հայացքն ուղղեք քրիստոնեության հնագույն օրրան հանդիսացող Արցախ աշխարհի վրա, հասկացեք, որ այս երկրի սրբությունները համամարդկային են և, երբ այն մատնվում է այլադավանների ձեռքն ու պղծվում, ապա Աստծո առաջ պատասխան պիտի տան բոլորը, որովհետև Ձեր եղբայրները նեղության մեջ էին, հիվանդ էին, բանտում էին և նրանց այցի չեկաք (Հմմտ. Մատթ. 25:31-46)»:*

Սիրելի հայրենակիցներ, Աստվածամոր մայրական կատարյալ սերն է, որ գոտեպնդեց մեզ Արցախի համար այս դժվարին օրերին նորից դիմելու բոլորիս անդավաճան Մորը, որ իր անսպառ գթությամբ, ծանոթ լինելով մեր մարդկային տկարություններին ու թերացումներին, բարեխոսի իր Միածին Որդու և մեր Տիրոջ առաջ: Ուստի այս տեսիլքով, Վերափոխման նախորդող շաբաթապահքի ընթացքին հրավիրեցինք բոլորիդ, սաղմոսներ երգելով և մեր սրտի աղոթքը իրար միացնելով մեկ ընդհանուր աղաչանքի ներքո ասել. *«Մա՛յր Սուրբ, բարեխոսյա՛...»:*

Թող Աստվածամայրը բարեխոս լինի Արցախ աշխարհի խաղաղության և համայն հայության միասնականության համար»: //

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղերի համար

- ֆիզիկա (68 դասաժամ),
- ճանապարհային երթևեկության և անվտանգության ապահովում (180 դասաժամ),
- քիմիա (118 դասաժամ),
- կենսաբանություն (34 դասաժամ),
- աշխարհագրություն (34 դասաժամ)
- պատմություն (348 դասաժամ):

Բարձրագույն կրթությունը պարտադիր է:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝ դիմում, կրթությունը հաստատող փաստաթուղթ՝ դիպլոմ (բնօրինակը և պատճենը), անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր (բնօրինակը և պատճենը), աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք՝ առկայության դեպքում, ինքնակենսագրություն, մեկ լուսանկար 3x4 չափի, այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների, ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը), հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի օգոստոսի 14-ից մինչև 2023թ. օգոստոսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 14:30-ին, «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Քաջարան, Խանջյան 5: Տեղեկությունների համար զանգահարել 077-52-32-90 հեռախոսահամարին:

ԿՈՐԵԼ Է Հայաստանի ամերիկյան համալսարանի 2022 թ. շրջանավարտ Գոռ Տիգրանի Կարապետյանի «Բիզնեսի» բաժնի բակալավրիատի դիպլոմը: Ուսանողական քարտի համարը՝ A09170015: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է «ԱՄՎՈՆ» ՍՊ ընկերությանը պատկանող՝ 1988 թ. արտադրության ԷՕ-4124 Ա մակնիշի էքսկավատորի պետհամարանիշը՝ 16-27ԱՓ: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է «ԱՄՎՈՆ» ՍՊ ընկերությանը պատկանող՝ 1977 թ. արտադրության ԷՕ 4121 մակնիշի էքսկավատորի պետհամարանիշը՝ 23-62ԱՓ: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Երևանի Լորիս Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանի 2010 թ. շրջանավարտ Արինե Վասակի Ստեփանյանի բակալավրի աստիճանի, «Իրավագիտություն» մասնագիտությաբ դիպլոմը՝ AB N 101798, գրանցման N 2551, 31 հուլիսի 2010 թ.: Համարել անվավեր:

Ագարակի պղնձամոլիբդենայինի նոր ղեկավարն է Ալեքսանդր Բելյաևը

Սկիզբը՝ էջ 1

ման առումով:

– Նույնիսկ առկա հաստիքացուցակը չենք կարողանում համալրել, այդպես է ստացվել: Ագարակը հանրապետության ամենահարավում է գտնվում, մարդիկ այնքան էլ հակված չեն այստեղ գալու, չնայած աշխատավարձերը (երբ համեմատում եմ Հայաստանի ձեռնարկությունների, նույնիսկ Ռուսաստանի Դաշնության որոշ ընկերությունների հետ) բավականին ծանրակշիռ են, ինչն այստեղ պիտի բերեր մարդկանց: Երկու ամիս է՝ ինչ աշխատում եմ, նկատել եմ՝ կան թափուր հաստիքներ, պաշտոններ, որ չենք կարողանում համալրել անհրաժեշտ մասնագետներով:

Ի դեպ, կոմբինատի հանքահումքային պաշարները բավականին հուսադրող են տասնամյակների կտրվածքով...

– Եվ վերջին հարցը. ի՞նչ կուզենայիք ասել հանրությանը, մասնավորապես Մեղրու և Ագարակի բնակչությանը, քանի որ առաջին անգամ եք հրապարակային խոսքով հանդես գալիս:

– Կարճ ժամանակ եմ աշխատում, բայց ինձ համար արդեն տեսանելի է ընկերության հեռանկարը... Այն արտադրանքը, որ տալիս է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, պահանջարկ ունի միջազգային շուկայում: Հայաստանը մոլիբդենի արտադրությամբ 6-8-րդ տեղն է զբաղեցնում աշխարհում: Այս տարածաշրջանը պիտի զարգանա. արտադրության զարգացման ճանապարհին անլուծելի որևէ հիմնախնդիր չեմ տեսնում, անձնակազմի համալրման հարցն էլ կլուծենք: Միանշանակ, կոմբինատի ապագան ես տեսնում եմ: Մենք խորհրդակցել ենք «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի հետ, երիտասարդներին ուսման կուղարկենք Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության լավագույն բուհեր, որ ավարտելուց հետո վերադառնան ու աշխատեն այս ընկերությունում: Մի խոսքով՝ լավատեսությամբ ենք նայում ապագային:

ԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Այցեքարտ

Ալեքսանդր Բելյաև, ծնվել է 1976 թվականի նոյեմբերի 28-ին: Գերազանցությամբ ավարտել է Կուզբասի պետական տեխնիկական համալսարանը՝ «Օգտակար հանածոների ծննդավայրի բաց մշակում» մասնագիտացմամբ: Լեռնային ինժեներ է:

1998-2002 թվականներին աշխատել է «Չերնիգովեց» ՓԲԸ-ում՝ լեռնային վարպետ:

2002-2003 թվականներին ինժեներ-խորհրդատու էր «Global Technology Group»-ի մոսկովյան ներկայացուցչությունում:

2003-2004 թվականներին տարածաշրջանային մենեջեր էր «Азот-Взрыв» ՓԲԸ-ում:

2004-2014 թվականներին կոմերցիոն տնօրեն և գլխավոր տնօրեն էր «Азот-Черниговец» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Азот-Взрыв» ընկերությունների խմբում:

2014-2021 թվականներին «Азот Майнинг Сервис» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալն էր:

2021 թվականից մինչև Ագարակի պղնձամոլիբդենայինի գլխավոր տնօրեն նշանակվելը Նենեցյան ինքնավար օկրուգի «НИПИГОРМАШ» ՍՊ ընկերության Նորիլսկի առանձնացված ստորաբաժանումների տնօրենի տեղակալն էր, ապա՝ տնօրենը:

«Սյունիքը» առաջնությունը սկսեց հաղթանակով

Մեծ ֆուտբոլը վերադառնում է Կապան: Օգոստոսի 6-ին քաղաքային մարզադաշտում Կապանի «Սյունիքը» Հայաստանի ֆուտբոլի երկրորդ խմբի առաջնության մեկնարկային տուրում ընդունեց «Ալաշկերտ-2»-ին:

Մինչ հանդիպումը սկսվելը երկու թիմի ավագները Հայաստանի օրհներգի հնչյունների ներքո բարձրացրին ՀՀ պետական, ինչպես և երկրորդ խմբի առաջնության ու «Սյունիք» թիմի խորհրդանշական դրոշները: Այնուհետև «Սյունիք» թիմի ավագ Ալեն Կարապետյանին հանձնվեց 2022-23 թթ. երկրորդ խմբի առաջնության «Լավագույն ռմբարկու» մրցանակը:

Հանդիպման սկզբում որոշակի զգալ տվեց մեկնարկային խաղին բնորոշ հուզմունքը: Բայց դա երկար չտևեց: Ալեն Կարապետյանը դրսևորեց գոլահարին հատուկ իր հատկանիշները, հանդիպման 19-րդ րոպեին նախ՝ անվրեպ իրացնելով 11 մետրանոց տուգանային հարվածը, այնուհետև՝ 26-րդ րոպեին կրկնապատկելով հաշիվը: Մինչև առաջին խաղակեսի ավարտը կապանցիները ևս մի անգամ գրավեցին մրցակցի դարպասը:

Երկրորդ խաղակեսում հյուրերին հաջողվեց «թրջել» հաշիվը, բայց սյունիքցիներին հաջողվեց ևս երկու անգամ մրցակցին ստիպել խաղը սկսել դաշտի կենտրոնից (գոլի հեղինակներ՝ Էդգար Գրիգորյան, Նորայր Ղազարյան): Մի խոսքով՝ երբ ավարտվեց հանդիպումը, լուսատախտակի վրա վառվում էր 5:1 հաշիվը:

Հանդիպման ավարտից հետո *«Յուրաքանչյուր մարզիչ տակտիկական խնդիր է դնում թիմի առջև, իրականացա՞վ մարզչի սպասելիքները»,* – հարցով դիմեցինք «Սյունիք»-ի ավագ մարզիչ Արամ Ոսկա նյանին:

– Մասամբ՝ այո, բավականին աշխատանք էինք տարել, բայց նաև շատ աշխատանք ունենք անելու: Կարևորը խաղային ձեռագիր է ձևավորվել, իհարկե այն տեղ-տեղ «կաղում» էր, բայց ժամանակ է հարկավոր՝ թերությունները շտկելու համար: Թիմը կոմպլեկտավորվել է, և խաղը պայմանավորված է խաղային բոլոր օղակների դինամիկ գործողություններով: Խաղից որոշակի գոհ եմ, բայց էլի ավելացնելու տեղ կա, – պատասխանեց Արամ Ոսկանյանը: Ի դեպ, Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի աղջիկների առաջնությանը մասնակցելու իրավունք է ստացել «Սյունիք» թիմը: Մեր աղջիկները առաջնության անդրանիկ տուրում՝ օգոստոսի 22-ին, կհյուրընկալեն «Լեռնային Արցախին»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



«Սյունյաց երկրի» կլոր սեղան-քննարկումը Բակունցի տուն-թանգարանում

Հուլիսի 8-ը Ակսել Բակունցի եղերական մահվան 86-րդ տարելիցի օրն էր: Այդ առիթով Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի հիմնադիր տնօրեն Սուրեն Դանիելյանի նախաձեռնությամբ Գորիս և գրողի տուն-թանգարան էին այցելել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քնարիկ Աբրահամյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, սահյանագետ Նաիրա Խաչատրյանը, ֆակուլտետի այլ անդամներ:

Այցի շրջանակում «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանի նախաձեռնությամբ անցկացվեց կլոր սեղան-քննարկում, որին, նրանց հետ միասին, մասնակցում էին նաև Ակսել Բակունցի տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանը, տուն-թանգարանի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեհմինա Մարությանը, Հայաստանի գրողների միության Սյունիքի բաժանմունքի ղեկավար Լևոն Սահակյանը և բանաստեղծ Վարուժան Գալստյանը:

Կլոր սեղան-քննարկումի առանցքում ազգային ինքնությանը, հայերենի պահպանմանը, արևմտահայերենի և արևմտահայ մշակութային արժեքների յուրացմանը, ժամանակակից գրականությանը և գրականագիտությանը, դպրոցական ծրագրերին ու դասագրքերին առնչվող հարցեր էին:

Կլոր սեղան-քննարկումը վարում էր Սամվել Ալեքսանյանը:

* * *

Սամվել Ալեքսանյան. *Հարգելի՛ բարեկամներ, ողջունում ենք Ձեր այցը Գորիս, թեև առիթը տոնական չէ, այլ Ակսել Բակունցի եղերական մահվան հերթական տարելիցը:*

Ոչ միշտ ենք մարզում հանդիպում բանասիրական գիտությունների ճանաչված ներկայացուցիչների նման խմբի: Ուստի և նպատակահարմար գտանք ձեր օգնությամբ քննարկում անցկացնել՝ գրական-մշակութային մի շարք հարցերի շուրջ, որոնք այսօր մտահոգում են մեր լսարանին:

Կարևոր մի հարցից սկսենք մեր քննարկումը. հանրության մեջ հիմնավոր մտահոգություն կա հանրակրթական դպրոցների դասագրքերի ստեղծման և ծրագրերի մշակման գործելակերպի հանդեպ: Ի՞նչ է կատարվում այդ ոլորտներում, կամ ինչպե՞ս է ծնվում դպրոցական դասագիրքը, նկատի ունենք առաջին հերթին հայ գրականության դասագրքերը: Դասագրքաստեղծ աշխատանքը տասնամյակներ շարունակ սխրանքի պես գործ է համարվել, և այդ մասին խոսելիս կամա-ակամա հիշել ենք Խաչատուր Աբովյանին, Ղազարոս Աղայանին, Հարություն Ալամդարյանին, Եղիշե Չարենցին... Բայց հիմա այնքան շատ են անունները, երբեմն (ներող եղեք) պատահական, երբեմն՝ գիտական հանրույթում ոչ հեղինակություն վայելող, արդյունքն էլ՝ շատ հաճախ վիճելի: Ինչպե՞ս է այսօր ծնվում հանրակրթական դպրոցի դասագիրքը:

Աշոտ Գալստյան. Ձեր հարցը շատ գլոբալ հիմքեր ունի, որովհետև կոնկրետ պետք է ընդգծել՝ ո՞ր դասարանի դասագրքի մասին է խոսքը: Հայ գրականության դասագիրքը սկսվում է 5-րդ դասարանից՝ «Մայրենի» խորագրով, 5-րդում, 6-րդում՝ «Մայրենի», 7-րդից «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաները բաժանվում են: Ինչ վերաբերում է «Մայրենի» դասագրքին... Այնտեղ լեզուն և գրականությունը համակցված են, լեզվական նյութերը նախարարությունը ներկայացնում է հեղինակներին, ովքեր ընտրվում են մրցույթով: Դասագրքի ստեղծման ողջ գործընթացին տարբեր հրատարակչություններ են մասնակցում՝ մրցույթով: Այստեղ ոչ թե հեղինակներն են տվյալ մրցույթի օբյեկտները, այլ հրատարակչությունները: Եվ մրցութային հանձնաժողովում լինում են տարբեր մասնագետներ, ովքեր պատասխանատու են դասագրքաստեղծման գործընթացի համար: Այդտեղ լինում են ուսուցիչներ, գրականագետներ, լեզվաբաններ, հոգեբաններ, մանկավարժներ, բժիշկներ, և բոլորն էլ պատասխանատվություն են կրում երեխայի գիտելիքի, հոգեֆիզիոլոգիական զարգացման համար: Բավական է ասել, որ երեխայի պայուսակի կշիռը պետք է լինի իր կշռի 10 տոկոսի չափ, բայց, եթե այսօր կշռենք պայուսակները, կտեսնենք, որ բավականին ծանր են՝ 5 կգ, 6 կգ: Այդ առումով խախտում կա, և այսօր ԿԳՄՍ նախարարությունը հանձնարարում է դասագրքերի քիչ ծավալ, որպեսզի երեխայի բեռը, այսպես կոչված, թեթև լինի: Այս տարի դասագրքի ծավալը փոքրացվել է, բայց երեխաները QR կոդերով պետք է նյութեր ուսումնասիրեն, այսինքն՝ հեռախոսով, գիտեք՝ QR կոդը բացվում է, և լրացուցիչ նյութերը կամ այն նյութերը, որոնք տեղ չեն գտնում դասագրքում, երեխաները կարող են ուսումնասիրել և՛ դասարանում, և՛ տանը: Կարծում եմ՝ միջառարկայական կապն էլ զգալի ներգործություն ունի հայ գրականության ժամին. նրանք երաժշտություն են լսում, հայտնի նկարիչների կտավներն են ուսումնասիրում, և վերջնարդյունքում ծնվում են աշակերտի խոսքը, աշակերտի բարոյական-մայիին հատկանիշը, հայրենասիրությունը և նկարագիրն ու դիմագիծը:



Նաիրա Խաչատրյան. Եթե կարելի է՝ դասագրքերի ծավալի մասին. որպես մանկավարժ և որպես գրականագետ ինձ թվում է՝ ոչ թե դասագրքային նյութերը պետք է իրենց ծավալով աչքի ընկնեն՝ մեծ կամ փոքր, այլ թեմայով ու արժեքով: Մեզ համար կարևոր պետք է լինի ոչ թե ի՞նչ, այլ ինչպե՞ս և ինչո՞ւ: Ինչո՞ւ պետք է այդ երկն աշակերտը կարդա, նպատակը. եթե կարող է փոքրածավալ երկով նա դառնալ ավելի ազնիվ, հայրենասեր, ինչո՞ւ ավելի ծավալունն ընդգրկել, ծավալունը կտանք լրացուցիչ ընթերցանության համար...

Սամվել Ալեքսանյան. *Եվ Ձեզ, պարոն Գալստյան, որպես հայագետ, որպես մանկավարժ բավարարո՞ւմ է դասագրքաստեղծ աշխատանքի այդ կերպը:*

Աշոտ Գալստյան. Անշուշտ, բավարարում է, բայց հեղինակները երբեմն անել վիճակի մեջ են հայտնվում. օրինակ, հատկապես 10, 11, 12 տարեկան երեխաների համար դժվարությամբ ենք գրական ստեղծագործություններ հայթայթում: Եթե բարձր դասարանի աշակերտների համար արդեն կան մշակված ստեղծագործություններ՝ Բակունցի պատմվածքները, Մահարու ստեղծագործությունները, ծրագրային մյուս նյութերը, որոնք հայը պետք է ուսումնասիրի, ապա ցածր դասարաններում ուզում ենք նաև ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ ներառել դասագրքերում, բայց, ցավոք սրտի, դժվարանում ենք, որովհետև չենք գտնում այն ստեղծագործությունը, որ պիտի հուզի 21-րդ դարի պատանուն, պիտի նրա ներաշխարհը մտնի, ոգևորի նրան, մղի հայրենասիրության: Այդ առումով խնդիր ունենք՝ ստեղծել գրական ստեղծագործություններ, պատմվածքներ, երկնել բանաստեղծություններ, որոնք կհետաքրքրեն 10, 11, 12 տարեկան աշակերտներին:

Սամվել Ալեքսանյան. *Մեր հարցերում գուցե և տեղային մտածելակերպի դրսևորումներ նկատեք, բայց ոչինչ. Սերո Խանզադյանը, օրինակ, ինչո՞ւ այդքան չնչին տեղ է զբաղեցնում ուսումնական ծրագրերում:*

Աշոտ Գալստյան. Սերո Խանզադյանը նոր դասագրքում՝ 5-րդ դասարանի, իր ուրույն տեղն ունի, դասագրքի հեղինակներն ընտրել են նրա ստեղծագործություններից մեկը՝ «Հորովելը» պատմվածքը, և այս տարի առաջին անգամ պետք է մուտք գործի դպրոց:

Նաիրա Խաչատրյան. Սերո Խանզադյանի «Հայրենապատում»-ը կար դասագրքերում, բայց ես, ներեցեք, դեմ եմ: Որովհետև դա գրական ստեղծագործություն չէ, ավելի շատ սցենարներ են, ռեժիսորական աշխատանքի, լրագրության արդյունք: Ցածր դասարանի աշակերտները չեն հասկանում, մինչդեռ մեզ պետք են գրական ստեղծագործություններ, որոնք նաև գեղարվեստական արժեք ունենան:

Սամվել Ալեքսանյան. *Չծավալվենք «Հայրենապատումի» շուրջ, չենք էլ վիճարկում ասվածը, թե այդ գրքի հատորները հասկանալի չեն դպրոցականներին: Բայց և արժե հիշել, օրինակ, պատմաբան Խիկար Բարսեղյանի գնահատականն այդ գործին՝ ««Հայրենապատումը» սովորական գիրք չէ, դա հայ ժողովրդի կենսապատումն է...»:*

Հիմա մեկ ուրիշ հարց քննարկենք՝ գրական ժանրերին առնչվող: Մեզանում մի միտում է նկատվում՝ վեպը և հատկապես պատմավեպը դուրս են մղվում գեղարվեստական գրականության տիրույթից:

Սուրեն Դանիելյան. Համաձայն եմ Ձեր դիտարկման հետ: Որպես այդպիսին՝ այսօր պատմավեպասանություն մեր գրականության մեջ դժվար գտնեք դասական իմաստով: Մենք կարծես սպասում ենք պատմականության և պատմության շարունակականության: Չեն տրվում ամփոփ գնահատականներ, քանի որ պատմության մեկ փուլը դեռ չի ավարտվել: Մեկնություններն ավելին են, քան գեղարվեստական հայտարարները:

Այստեղ կա նաև ընթերցողների խնդիրը. կարծես չենք շտապում երկարաշունչ գրքեր կարդալ, ժամանակ չունենք:

Ինչ մնում է գրական տիրույթից դուրս մնալուն, դա վերաբերում է նաև արևելահայ և արևմտահայ գրական ընկալումների հարաբերակցությանը: Կան թատերագիրներ Գաբրիել Սունդուկյանը, Շիրվանզադեն և Շանթը, բայց գրողների նկատմամբ վերաբերմունքն ակամա խտրական է: Ցավոք, մենք երկրորդական տեղ ենք տալիս թատրոնին, բայց թատրոնը լավագույն լսարանն է, որ կարողանում է գիրք չընթերցող մարդուն գեղարվեստական զգայություններ ներարկել: Ես քանիցս առաջարկել եմ ունենալ արևմտահայ թատրոն, գոնե հենց լեզուն կլսեն, ճանաչողություն ձեռք կբերեն, սեր կունենան: Օրինակ, շատ բարձր եմ գնահատում Լևոն Շանթի ստեղծագործությունները: Հակոբ Օշականը նույնպես հրաշալի թատերագիր է. 20-ից ավելի թատերական գործ ունի: Բարձրարժեք «Երկնքի ճամբով» դրաման, որ ստեղծվել է 30-ական թվականներին՝ շուրջ 100 տարի առաջ, իմ կարծիքով, այսօր կարող է բեմ բարձրանալ և հուզել հասարակությանը ճանաչողական խորքով. մի ամբողջ ժողովուրդ գնում էր մահվանն ընդառաջ, գնում էր երկնքի ճամփով...

Այսօր խոսում էինք Ակսել Բակունցի կյանքի վերջին օրվա մասին և ենթադրություններ անում, թե մահվանից առաջ ինչ ապրումներ կարող էր նա ունենալ... Թատերական նյո՞ւթ է, այո՛...

Եվ ուրեմն՝ խոր ճանաչողություն պիտի արմատավորվի՞ այսօրվա մեր արժեքների մեջ, թե՞ ոչ: Անպայման պիտի արմատավորվի, բայց արդյո՞ք արմատավորվում է, ո՛չ, որովհետև այն գաղափարները, որ արտահայտում էին իրենք՝ մեր լավագույն գրողները 30-ական թվականներին, գալիս անցնում են մեր ականջի կողքով: Խորհրդային արժեհամակարգից արդեն բավականին անցել ենք, ուրեմն՝ մեղքը չբարդենք միայն խորհրդային կարգերի վրա, մեզ պետք է արժևորման նոր սկզբունք:

Մենք արևելահայ ենք ու հաճախ քար ենք գցում արևմտահայ գրականության յուրացման ճանապարհին: Քաղաքականության մեջ էլ է այդպես, չի կարելի վարվել նման կերպ: Մենք պետք է արևմտահայ գրական արժեքների ճանաչողության մեջ ելնենք մի պարզ ճշմարտությունից՝ արևմտահայերը մերն են այնքան, որքան արևելահայերը: Իսկ մեզ մոտ հակառակն է: Ձեզ մի հակասություն էլ ցույց տամ՝ մենք արևմտահայ լեզվի հարցադր-

Շարունակությունը՝ էջ 4

«Սյունյաց Երկրի» կլոր սեղան-քննարկումը Բակունցի տուն-թանգարանում

Սկիզբը՝ էջ 3

ումներ դպրոցական ծրագրերում չենք դնում, բայց արևմտահայ հեղինակներն այդ ծրագրերում մնում են՝ Դուրյանը լինի, Վարուժանը կամ գրական շարժումներ: Արևմտահայ լեզվի վերաբերյալ տարրական, սկզբնական գիտելիք չենք տալիս. այ լեզվաբանները դա շատ լավ գիտեն: Մինչդեռ Դանիել Վարուժան չես կարող հասկացնել երեխային, եթե լեզուն չի յուրացնում:

Մեր առջև դրված է միջուկի տրոհում հասկացությունը, սա ֆիզիկայի տերմինաբանություն չէ, մեր գրականության միջուկը տրոհված է այսօր: Արևմտահայ գրականությունը նետվեց դաշնակցության, դրսի գրականության, կապիտալիստական բարքերի մտացածին տիրույթ, և երկար տարիներ մեր ականջը սղոցեցին դրանով: Սա է ցավը, մեծագույն ցավը, օտարացրին մեզ մեզանից, այն էլ ինչ ձևով: Եթե այսօր խոսում ենք գրականության ճանաչողության հետ կապված շատ ու շատ սկզբունքային խնդիրների շուրջ, պետք է ելնենք նրանից՝ գրականությունն ազգայի՞ն է, ժողովրդակա՞ն կամ ավելի լայն, հեռու գնացող քաղաքական հարցադրումների ճանապա՞րհ: Դասագրքերի մասին ենք խոսում, դասագրքերը կառուցվում են խոտանի ու գաղափարի ելագծով, դասագիրքը չի ճանաչում գեղարվեստական որակի մեծությունը. Չարեի Խրախունի չկա, Դանիել Վարուժան չկա՝ իբրև գեղագիտություն: Անգամ Եղիշե Չարենցի մեծությունը պատշաճ չի ներկայացվում: Ոչ մեկս չենք հասցնում աշակերտներին տալ Եղիշե Չարենցի ստեղծագործությունների մեջ 30-ական թվականների արժեքը: Բոլորը Եղիշե Չարենցին գիտեն իբրև մի մեծություն, որը գալիս է «Ամբոխները խելագարված»-ից... Մինչդեռ 33 թվականին գրված նրա «Մահվան տեսիլը» մեծագույն արժեք է, իր ճանաչողության մեջ մեծ վերքի բացահայտման գեղարվեստական արտահայտություն...

Նա պաշտում էր Սիամանթոյին, Վարուժանին. ամբողջ արևմտահայ գրողների տողանցքը բերեց «Մահվան տեսիլ»-ում: Այդ գրողներից շատ շատերն այսօր դեր չունեն, ձայն չունեն:

Սամվել Ալեքսանյան. *Պարոն Դանիելյան, ի՞նչ ասել է արևմտահայերեն, երբ Արևմտյան Հայաստանում ունեցել ենք մի քանի տասնյակ բարբառ, միգուցե Պոլսի բարբա՞ռն է արևմտահայերեն ասվածը, կարո՞ղ ենք արևմտահայերենն ընկալել իբրև Պոլսի բարբառի հիման վրա ստեղծված լեզու:*

Սուրեն Դանիելյան. Իհարկե, այո՛, չնայած այն սնվել և սնվում է նաև բարբառներից: Այսօր կա պոլսահայությունը, կա Սփյուռքում ապրող արևմտահայ ժողովուրդը: Սակայն Հայաստանում, հատկապես կրթական ասպարեզում, արևմտահայերենի հանդեպ վերաբերմունքը տրորված է, ճզմված, սա է իրողությունը: Արևելահայերենի և արևմտահայերենի հավասարության մասին խոսք լինել չի կարող:

Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունը մեզ համար ծիծաղ հարուցելու միջոց է, մենք ծիծաղն ենք նրա մեջ որսում, բայց նրա գեղագիտական մեծությունը չենք կարևորում մեր հարցադրումներում: Օրինակ, Դուք, պարոն Ալեքսանյան, գրականության մարդ եք, Ձեր մասին իմ տպավորությունը ստեղծել եմ Ձեր շատ հրաշալի ամսագրային արժեք ունեցող թերթային համարներից, ուշադրություն դարձրե՞լ եք մի հանգամանքի վրա. մենք շատ դժվարությամբ ենք հաշտվում արևմտահայ և արևելահայ գրականության համամասնորեն քննության պահանջին:

Մենք վերակազմակերպվելու խնդիր ունենք առհասարակ գրականության մեջ, այսինքն՝ հեղինակների ճանաչողականության մեջ, ո՞վ է այսօր լավագույնը հեղինակների մեջ, մենք մինչև հիմա նշում ենք՝ Հովհաննես Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության, բայց նույն ասողն այսօր եկել Թումանյանի հետ միասին բախում է Ամենայն հայոց կոչվելու դռները: Մեր գրականությունը մինչև հիմա բրգաձև է, իսկ ես կուզենայի, որ մենք քառագագաթ լինեինք, մեծություններն արժևորելու նոր հայացք փորձեինք երևան բերել, մի բան, որ չենք անում: Օրինակ, Հակոբ Օշականը մեր խոշորագույն վիպագիրներից է, բայց ինչպես ասվեց՝ ո՞վ է հասկանալու: Լեզվի խնդիրը գալիս և ուղեփակոց է դառնում, իսկ ճանապարհը դպրոցն է: Ես Ձեզ ասում եմ՝ մենք արևմտահայ լեզուն գիտակցաբար դուրս ենք մղել դպրոցական դասագրքերից: Արևելահայ դպրոցում երեխան արևմտահայերեն լեզվական դաստիարակություն չի ստանում, որը մեծ բացթողում է:

Մենք այս ճանապարհին շատ բան կորցրինք, այդ թվում՝ պոեզիայի հարցում, որտեղ մեծագույն կորուստներից մեկը, ուզում եմ անկեղծ լինել, Վահան Թեքեյանի գրական ոգին էր: Վահան Թեքեյանը հզոր դեմք է, բայց մերոնցից քանի՞սն են ճանաչում նրա ստեղծագործական արժեքը:

Սամվել Ալեքսանյան. *Բոլորս քննադատում ենք այն ժամանակները, երբ եղել է գրաքննություն՝ ցենզուրա... Մենք լրատվամիջոց ենք ներկայացնում՝ մարզային մեծ լսարան ունենք, Կապանից, Մեղրուց, Գորիսից, Սիսիանից շատ ստեղծագործողներ են ուզում այդ հարթակից ներկայանալ: Մենք էլ ուզում ենք ընդառաջել, բայց բախվում ենք մի հարցի՝ ո՞րն է գրական գործի չափորոշիչը: Հետո պարզվում է՝ այդ խնդիրը կա նաև այսօրվա մեր գրականության մեջ: Ձեր տեսակետը՝ գրական ստեղծագործության գնահատման չափանիշները:*

Աշոտ Գալստյան. Թող տպավորություն չստեղծվի, որ ընդհանրապես փորձ եմ կատարում ստվեր ձգել ժամանակակից գրողների ստեղծագործությունների վրա, երբ ասում եմ՝ 10-11 տարեկան երեխաների համար ստեղծագործություններ չենք գտնում ժամանակակից գրողներից, բնավ այդպես չէ: Այսօր ունենք շատ լուրջ գրողներ, ովքեր ստեղծագործում են. բանաստեղծներ են, արձակագիրներ են, և գրականագետները նրանց արվեստը բարձր են գնահատում: Չորօրինակ, վերջերս մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետում հյուրընկալել էինք մի երիտասարդ գրողի՝ Պետրոս Հոկտանյան, ում հետ երբևէ մտերմություն չէինք ունեցել, չէինք ճանաչում, բայց նրան ճանաչեցինք ֆեյսբուքյան էջերից ու գտանք, որ երիտասարդ գրողը, ով 40 տարեկան է, պետք է ճանաչված լինի մեր ուսանողների կողմից, և նրան հրավիրեցինք մեր ֆակուլտետ, մեկ ժամից ավելի զրույց ունեցանք: Եվ պետք է ասեմ՝ հրաշալի բանաստեղծություններ ունի ֆեյսբուքյան հարթակում, նրա բանաստեղծությունները կատարում են մեր հայտնի դերասանները, արվեստագետները: Տիկին Խաչատրյանը զեկուցումով հանդես եկավ, հոկտանյանական բանաստեղծական աշխարհը ներկայացրեց մեր ուսանողներին ու բարձր կարծիք արտահայտեց նրա ստեղծագործությունների մասին:

Սամվել Ալեքսանյան. *Ժուռնալիստիկայում կա մի հիվանդություն, որը, կարծեք, մուտք է գործել նաև գրականության տիրույթ. ժանրերի խնդիրը նկատի ունենք: Այսօր Ակսել Բակունցի մասին շատ խոսեցինք, բայց նա մտահոգված էր նաև գրական ժանրերով: 1934 թ. օգոստոս-սեպտեմբերին Բակունցը մասնակցում էր ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարին: Համագումարի բացման օրը «Литературная газета» թերթը տպագրում է նրա հետ թերթի թղթակցի զրույցը՝ «Հանուն ժանրերի բազմազանության» վերնագրով: Այդ հարցը նա արծարծեց նաև օգոստոսի 22-ին համագումարում ունեցած ելույթում:*

Իսկ հիմա... Ոչ միայն ժուռնալիստիկայում, այլև գրականության մեջ խախտվել է ժանրերի միջև գոյություն ունեցող սահմանը:

Քնարիկ Աբրահամյան. Ճիշտ եք ասում, մենք չենք կարող 19-րդ դարի գրականության ուսումնասիրության կամ ուսումնառության չափանիշները բերել և գործածել 20-րդ կամ առավել ևս 21-րդ դարի հեղինակների առնչությամբ: Ուղղությունները և ժանրերը. չեմ ուզում շատ տարբերակել այդ երկու հասկացությունը, թեև իրենք տարբեր են մասնագիտական տեսանկյունից, բայց Ձեր դիտարկումը, ճիշտ է, տեղի է ունեցել և՛ ուղղությունների, և՛ ժանրերի հետ: Ինչպես այսօր չենք կարող խոսել մաքուր գրական ուղղությունների մասին, այնպես էլ չենք կարող խոսել մեկընդմիշտ տրված գրական ժանրերի մասին: Օրինակ բերեմ թերևս 21-րդ դարի լավագույն գրողի՝ Լևոն Խեչոյանի ստեղծագործության օրինակով. խոսքը «Միերի դռան գիրքը» վեպի մասին է: Ի՞նչ է այդ գիրքն այսօր, էպոսի մասին գիտական աշխատության փո՞րձ, թե՞... Որովհետև երբ գիրքը բացում ես, տեսնում ես այնտեղ ծանոթագրություններ կամ առնվազն գրականության ցանկ, որից օգտվել է հեղինակը: Եթե բերում դնում և ուզում ես հասկանալ էպոսի ու ժողովրդի փոխըմբռնումը, գուցե հասկանալի ինչ-որ բաներ կան, ապա այդ դեպքում դասախոսի երկար օրագիրն ի՞նչ է անում այնտեղ: Այսինքն՝ Լևոն Խեչոյանի ապրած կյանքը, անձնական կյանքը՝ հուշապատո՞ւմ է, օրագրությո՞ւն է. դա էլ մտել է «Միերի դռան գիրքը» կոչվող ստեղծագործության մեջ: Հիմա տեսեք՝ ստացվում է այնպես, որ մենք ուղղակիորեն պիտի երեխային կամ ուսանողին, ում սովորեցնում ենք գրականության հետ շփվելու՝ այսպես ասած գաղտնիքները կամ սկզբունքները, հասկացնենք գոնե սեռերին, ժանրերին, գրական ուղղություններին ժամանակի գրապատմական տեսանկյունից մոտենալու տարրերը:

Նաիրա Խաչատրյան. Իսկապես, այսօր դժվար է տարանջատել այդ հասկացությունները: Օրինակ, Չարենցի «Երկիր Նաիրին». պոեմանման վեպ է... Ժանրն ու սեռը տարանջատում ես իրարից ու երևում է, բայց մեծ մասամբ՝ անգամ ամենաանվանի գրականագետները սեռն ու ժանրն իրար հետ խառն են ներկայացնում, դրա համար է այդ խառնաշփոթը:

Քնարիկ Աբրահամյան. Մի սարսափելի բան էլ կա այսօր՝ ամեն ինչը կոչվում է գրականություն: Ֆեյսբուքում մարդը գրառում է կատարում, և, չգիտես ինչու, ինքը համարում է, որ մենք պարտավոր ենք դա կարդալ, ու շատ ծանր վիճակ է ստեղծվում մասնագետի համար: Դեռ ինքը պետք է նախ կարողանա մաքրել կամ ֆիլտրել այդ գրառումը, որից հետո միգուցե հնարավոր լինի հասկանալ՝ դա գրականությո՞ւն է, թե՞ ոչ, գրառման մակարդակի՞ է, թե՞ ինչ-որ մեկին ինչ-որ բան հասկացնելու պարզ ցանկություն: Ամեն տպագիր բան չէ, որ գրականություն է:

Աշոտ Գալստյան. Շատ հետաքրքիր հարց տվեցիք՝ ժանրերին առնչվող, իսկ տիկին Աբրահամյանը խորքային վերլուծություն արեց: Այո, այդպես է, 21-րդ դարում գրական ստեղծագործությունները ներժանրային առնչակցություններ են ունենում: Օրինակ, գրականագետ Ժենյա Քալանթարյանն այդ մասին բավական հետաքրքիր հոդվածով հանդես եկավ «Գրական թերթում»: Այսպես՝ պատմվածքի մեջ կարող են մտնել, ինչպես տիկին Աբրահամյանն ասաց, օրագրության տարրեր, էսսեի տարրեր, և, կարծեք, ժանրային այդ փոփոխությունը 21-րդ դարում նկատելի է գրականագետների կողմից, մասնագետների կողմից: Ու մենք չենք կարող այդ ստեղծագործությունները համարել մաքուր պատմվածք, համարել մաքուր էսսե: Դրանք տարբեր ժանրերի՝ այսպես կոչված խառնուրդ են, ու այդ առումով ներժանրային փոխանցումները զգալի են: Հենց գեղարվեստական վավերագրության տարբեր տեսակները, փաստագրությունը, օրագրությունը, ուղեգրությունը, հուշագրությունը, էսսեն այնպես են միաձուլված իրար, որ մենք չենք կարող վերջնարդյունքում նշել, թե տվյալ ստեղծագործությունն օրագրությո՞ւն է, պատմվա՞ծք է, գեղարվեստական ո՞ր ուղղությանն է պատկանում, քանզի այդ ստեղծագործության մեջ տարբեր ժանրերից որոշակի կտորներ են ի հայտ գալիս:

Քնարիկ Աբրահամյան. Հիմա ես մտածեցի (Ձեր հարցից ծագեց այդ խորացումը) այն մասին, որ թերևս այստեղ արդեն ժանրային ոչ մի բան չի մնում տարբերակիչ, իբրև հատկանիշ. թերևս միայն գեղարվեստականությունը, այսինքն՝ վերացարկում կա՞, թե՞ ոչ:

Սամվել Ալեքսանյան. *2020 թվականին մենք ազգային մեծ ողբերգություն ենք ապրել և շարունակում ենք ապրել: Երբ մեկ տարի առաջ Գորիսի պետական համալսարանում գիտաժողով էր, ու ինձ էլ ելույթի հնարավորություն տվեցին, զարմանքս արտահայտեցի՝ 2022-ին գիտաժողով ենք անցկացնում, հայագիտական բազմաթիվ հարցեր քննարկում, բայց հայագիտական թեմաների մեջ բառ անգամ չկա այն մասին, թե ի՞նչ տեղի ունեցավ մեզանում 20 թվականի աշնանը, ինչպե՞ս ընթացավ կամ ինչո՞ւ ծագեց այդ պատերազմը, ի՞նչ հետևանքներ ունեցավ: Ասել է թե՝ դարերի, հազարամյակների կտրվածքով մեր պատմության մեջ տեղի է ունեցել մեծ ողբերգություն, իսկ հայագիտությունն ասելիք չունի, կողքից հայեցողի դերում է: Հիմա նույն հարցը ցանկանում եմ հնչեցնել գեղարվեստական գրականության առումով. այդ նույն հարցը ցանկանում եմ հնչեցնել գեղարվեստական գրականության առումով. այդ թեման դժվարությամբ է դառնում գրականության նյութ...*

Սուրեն Դանիելյան. Գեղարվեստականության մասին թերևս վաղ է տալ ամբողջական գնահատություններ, սակայն պիտի արձանագրել, որ անուններ կան, որոնք եթե անգամ վկայակոչում են ավելի վաղ հերոսական դրվագներ, նորից առիթը վերջին ժամանակաշրջանի իրադարձություններն են: Թվարկենք քանի անուն՝ Խաչիկ Մանուկյան, Հովհաննես Երանյան, Սուսաննա Հարությունյան, Հրաչյա Բեգլարյան, Նոնա Պողոսյան...

Սամվել Ալեքսանյան. *Եվ, այնուամենայնիվ, ինչո՞ւ նշված թեման չի դառնում գեղարվեստական գրականության նյութ:*

Նաիրա Խաչատրյան. Պատերազմի թեմա՞ն: Դեռ շուտ է, ես այն կարծիքին եմ, որ պատմական ամենացնցուն իրադարձություններն անգամ գրականության մեջ չեն կարող արտացոլվել անմիջապես: Որովհետև դա պատմություն չէ՝ ինչ տեսար՝ գրեցիր, դա զգացմունք է, դա պետք է ապրես, դա պետք է խմորվի, պետք է որոշակի ժամանակ անցնի: Ինչպես ցանկացած մարդ, մենք ընդունեցինք այդ պատերազմը՝ որպես անձնական ցավ, իսկ անձնական ցավի մասին ոչ ոք միանգամից չի խոսում, դրա համար ժամանակ է պետք, որ գրողը կարողանա սեփական ցավը ներկայացնել:

Սամվել Ալեքսանյան. *Հայրենական մեծ պատերազմի տարիներին ծնվեց Համո Սահյանի «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությունը՝ Վոլգայի ափին, նավի տախտակամածին: Բանաստեղծությունը, Ստեփան Զորյանի նախաձեռնությամբ, նախ տպագրվեց «Սովետական գրականություն» ամսագրում, հետո թարգմանվեց ռուսերեն և լույս տեսավ «Комсомольская Правда» թերթում: Կամ նրա «Որոտանի եզերքին» շարքը (1942 թ.), որի մեջ քնարական հերոսը կռվող նավաստին էր:*

Կամ ռուս գրող Կոնստանտին Սիմոնովը. Հայրենական մեծ պատերազմի օրերին դիմեց պատերազմում ռուս մարդու թեմային...

Սուրեն Դանիելյան. Ասում եք՝ ժամանակ անցնի, ինչքա՞ն ժամանակ, ինչո՞ւ Հայրենական մեծ պատերազմի օրերում ծնվեցին գեղարվեստական գործեր տվյալ պատերազմին վերաբերող թեմաներով:

Կամ 60-ական թվականները, ինչո՞ւ ինքնության հնարավորություն ստեղծեցին արևելահայ պոեզիայում, բայց արձակի մեջ այդ բանը չստացվեց:

Նաիրա Խաչատրյան. Ես այս կարծիքին եմ՝ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում և հետպատերազմյան ժամանակաշրջանում գրված ստեղծագործություններն այնքան էլ անկեղծ չէին, նրանք ծրագրային էին: Իսկ հիմա ծրագրային բանաստեղծությունների և ստեղծագործությունների կարիքը չունենք: Նորից այս միտքը հստակ նշեմ՝ ցանկացած մեկն իր անձնական ցավի մասին միանգամից չի խոսում. եթե ունեցել եք անձնական կորուստ, ցավ, անցնում է որոշ ժամանակ և, նոր միայն կարողանում եք այդ մասին խոսել: Գրականությունը պետք է, այսպես ասած, մարսի նյութը, որ կարողանա գեղարվեստական արժեք ստեղծել դրանից: Պատմությունը, հրապարակագրությունը կարող են խոսել:

Այն ժամանակ խորհրդային երկիր էր, և ստեղծագործությունները ծրագրային էին: Այո՛, տալիս էին, պիտի գրես, որ հաղթել ես, պիտի գրես, որ դու ուրախ ես, որ զոհվել ես: Չմոռանանք, հենց Իսահակյանի նման հզոր վարպետին... Ասում էր՝ հայրս սեղան է բացել տան առաջ, ձեր որդիների կենացը խմենք:

Եվ մյուս պատճառը՝ մեր մտածողությունը, մեր կյանքը, անգամ մշակույթն այնքան հագեցած են քաղաքական աղբով, որ գրականությունն ինչ-որ տեղ դեռ լսելի չէ, բայց այդ գրականությունը ստեղծվում է: Ուղղակի կգա ժամանակը, և մենք այդ մասին կիմանանք: Եղեռնի տարիներին այդքան հզոր ստեղծագործություններ չգրեցին:

Միևնույն ժամանակ՝ Հովիկ Վարդումյանն ունի վեպեր, որտեղ Արցախյան պատերազմն է, Լևոն Խեչոյանը...

Սուրեն Դանիելյան. Բա այդ դեպքում Չարենցը ո՞նց ստեղծեց իր լավագույն գործերը: Խնդիրը եղեռնը չէ միայն, ազգային ճանաչողության խնդիրն է, մենք մեզ ճանաչելու, չի ստեղծվում...

Դոստոևսկուց, Տոլստոյից որքան ժամանակ է անցել, ո՞ւր է արտադրանքը, ազդեցությունը, չկա, իհարկե, չկա:

Լևոն Սահակյան. Խաչիկ Մանուկյանը մեր պոեզիայի այսօրվա լավագույն ներկայացուցիչներից է, եթե ոչ ամենալավը: Խաչիկ Մանուկյանը նույնիսկ գրքերով է այդ թեման արծարծում, ինչպե՞ս կարող ենք ասել, որ Արցախյան պատերազմի թեման մուտք չի գործում գրականություն: Ես նույնպես, օրինակ, ունեմ պատերազմին նվիրված, տասնյակ գործեր: Օրինակ՝

«Հերիք է, եղբայր,
Հաղթենք մեռնելով,
Ու միավորվենք ծայրահեղ պահին,
Ժամանակն է, որ հաղթենք ապրելով,
Եվ հաղթանակը չթողնենք մահին»:

Սա ի՞նչ է, ճիչ չէ՞ հոգու, պայքար չէ՞, ոգորում չէ՞:

Ստեղծվող շատ գործերի մենք ծանոթ չենք, չգիտենք, թե ով ինչ է արել կամ անում: Գրքեր կան Հայաստանում, որ մենք ծանոթ չենք, չգիտենք այդ մասին: Ինչքան էլ տարօրինակ է, ինչքան էլ պարադոքսալ է, փոքր ազգ ենք, բայց իրար չենք ճանաչում:

Աշոտ Գալստյան. Ես նույնպես համաձայն եմ բանախոսներին, իհարկե գրվում են, բայց ամբողջական չեն գրվում, օրինակ Հայկ Խաչատրյանի «Պատմահայրը» վեպում Մովսես Խորենացուն հորդորում են պատմությունը հասցնել մինչև իր օրերը, մինչև վերջին ժամանակները, ասում էր՝ ես չեմ կարող այդպես վարվել, պետք է պատմությունը մի որոշակի ժամանակ մնա, թանձրանա, որ դառնա գեղարվեստական ստեղծագործություն ու գրվի: Դուք կարծում եք մեր օրերի կամ Արցախյան գոյապայքարի մասին վեպեր չե՞ն գրվելու: Բնականաբար, գրվելու են, բայց որոշակի ժամանակ է պետք, իսկ այսօր ունենք հեղինակներ... Այո՛, Խաչիկ Մանուկյանը, որից ես ընտրել եմ մի ստեղծագործություն ու տեղադրել 5-րդ դասարանի մայրենիի դասագրքում, լավագույն հեղինակներից մեկն է, խոնարհում նաև նրա որդու հիշատակի առջև: Կարծում եմ՝ գրվում են: Իսկ ամբողջական՝ ամբողջապին բնորոշ ստեղծագործություններ անպայման գրվելու են, ծնվելու են... Մի օրինակ էլ բերեմ՝ Պերճ Պռոշյանի «Հուշիկները», որ գրվեց. իր կենսագրությունն էր, նա մինչև իր օրերը չգրեց, նա այդ ստեղծագործության մեջ ներառեց 30-40 տարի առաջ եղած դեպքերն ու դեմքերը, որոնք արդեն խմորվել էին, նստվածք էին տվել, նոր այդժամ կարողացավ նկարագրել իր ամբողջ գեղարվեստական վավերագրությունը:

Քնարիկ Աբրահամյան. Հենց ընկեր Խաչատրյանի ասածի մասով. մի քիչ թերևս ժանրերն են մեղավոր. եթե նայում ես, օրինակ, եղեռնապատումի գրականությունը ստեղծվում էր հենց նույն ժամանակ: Օրինակ, Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ»-ը, «Հոգեհանգիստ»-ը՝ 15 թվականին գրված: Ասելիքս հետևյալն է՝ երբ մենք անդրադառնում ենք բանաստեղծական արծարծումին, կարող է անմիջապես գալ, բայց վիպականի առումով, ավարտուն գործ ստեղծելու առումով ժամանակը պիտի հասնի, որ տեղի ունեցածը, կատարվածը պատկերացնի գրողը, ինքը տեսնի՝ ինչ է կատարվել ու նոր կարողանա անդրադառնալ դրան: Դրա համար, ասենք, եղեռնապատումի վիպասանությունն ավելի ուշ է գալիս, հիմնականում օտարագիր գրողների գրչի տակ է ձևավորվում, այն էլ՝ արդեն երկրորդ, երրորդ սերնդի համար:

Նաիրա Խաչատրյան. Գրականությունը և գրականագիտությունը զանազան են, ցանկացած հեղինակ կամ ոչ հեղինակ գրում է որևիցե ստեղծագործություն, նա արժեք է ստանում գեղարվեստական-գրականագիտական ուսումնասիրությունների արդյունքում ու ձեռք բերում ճանաչելիություն: Մենք հիմա ունենք գրականագիտական հայացքի պակաս՝ շատ գրողների աշխատանքների ու ստեղծագործությունների՝ անգամ տպագրված գրքերի վերաբերյալ: Գտնում եմ, որ նորից այդ հարցը պետական մակարդակով պետք է կառավարվի: Խորհրդային կարգերի օրոք՝ հետպատերազմյան շրջանում, ստեղծագործությունները տպագրվում էին, բաժանվում էին և հրահանգվում էր՝ այդ գրքերի, այդ ստեղծագործությունների մասին խոսել՝ միայն դրական կարծիք արտահայտելով: Հիմա շատ գրքերի, արժեքավոր բազմաթիվ գործերի մենք անծանոթ ենք, տեղյակ չենք, իսկ եթե տեղյակ չենք, ինչպե՞ս կարող ենք ասել՝ լա՞վ է գրել, վա՞տ է գրել... Դրա համար պետք է լինի պետական հոգածություն: Գրականագետները բոլորովին անտեսված շերտ են, իսկ գրականագետն է գրականությունն արժևորում, գրողը հո չի՞ ասելու՝ ես լավ եմ գրել կամ վատ, դա ապրանք է, որը ստեղծվում է, գնորդ է պետք, որ գովազդի և ասի՝ լավն է, թե՝ ոչ, ճիշտ է, թե՝ սխալ:

Թեհմինա Մարության. Պատերազմի թեմայից խոսեցիք... Ներկայացնեմ՝ պարոն Վարդան Սարգսյանն արձակագիր է, ունի արդեն պատմվածքների ժողովածու և մեկն էլ պատրաստվում է հրատարակել: Հրաշալի արձակագիր է, ես վերջերս անդրադարձել եմ... Անմիջապես՝ պատերազմից հետո, մի պատմվածք է գրել, որը կարճ տարածքի մեջ մի ողբերգություն է խտացրել. դա «Ծանրաբերդի տիրակալն» է, որը հողերի հանձնման պատկեր է և հրաշալի անդրադարձ:

Սամվել Ալեքսանյան. *Ուզում եմ կլոր սեղանը եզրափակենք՝ անդրադառնալով մեր լեզվի վիճակին: Այսօր մեր լեզուն փորձության մեջ է. հեռուստատեսություն, մամուլ, սոցիալական հարթակներ, Ազգային ժողով, ամենատարբեր իշխանավորների ելույթներ... Կուզենայի ձեր դիտարկումները լսել մեր լեզվի այսօրվա վիճակի մասին...*

Սուրեն Դանիելյան. Լեզուն պետք է հավասար վերաբերմունքով ներգործել կարողանա մեզնից յուրաքանչյուրի մտքի վրա. արևմտահայերեն գրես, թե՝ արևելահայերեն... Դրա համար անհրաժեշտ է լեզվի նկատմամբ խտրական վերաբերմունքը մի կողմ դնել, խտրական վերաբերմունք, որ մենք ենք մշակել, մեր մշակույթի գործիչները:

Նաիրա Խաչատրյան. Դրան էլ նորից պետական հոգածություն է անհրաժեշտ: Հիմա առաջվանը չէ, որ մարդիկ միայն մամուլով ու գրքերով ծանոթանան գրական խոսքին, գրական հայերենին: Մենք լսում ենք հեռուստատեսությամբ, հեռախոսներով, ամենատարբեր էլեկտրոնային սարքերով. խոսում են, խոսում է՝ ով պատահի, ինչ ցանկանա, ինչպես կարող է: Բնականաբար, վերահսկողություն պետք է... Այո՛, մեր լեզվի մեջ կան շատ ժարգոնային բառեր: Եթե բարբառային լինի՝ դա հպարտություն է: Ժամանակակից բառեր են օգտագործվում, օրինակ՝ «լայքեր», «օքեյ». մտել են մեր լեզվի մեջ և ոչ միայն աղավաղում են հայոց լեզուն, այլև հայի մտածողությունը, որովհետև լեզուն ձևավորում է նաև լեզվական մտածողություն և աշխարհայացք: Ու գուցե այդ աշխարհայացքն արդեն կա մեզ մոտ. լեզվական մտածողության արդյունքը հետո է ծնվում, որից հետո էլ այդ բառապաշարով ենք խոսում: Դրա համար, կրկնում եմ, պետական հոգածություն և չափանիշներ են պետք: Պիտի արգելել, օրինակ, որ կիսագրագետ խոսվածքով ներկայանան հեռուստատեսությամբ:

Այնուհետև՝ գրականությունը և, իհարկե, լեզուն ու այն ամենը, ինչն ընդհանրապես և ինչ-որ չափով առնչվում է գիտությանը, արվեստին, պետք է դուրս գա քաղաքական շրջանակներից, կուսակցական շրջանակներից: Քանի դեռ թշնամական այդ տարորոշումը գոյություն ունի՝ մենք երբեք չենք կարող մշակույթի, գրականության հարցերում հասնել այն երազանքին, որին ձգտում ենք: Մի շատ տիպիկ օրինակ. ուսանողին հանձնարարել եմ անպայման կարդալ Ավետիս Ահարոնյանի ստեղծագործությունները, պիտի գար ու հանձներ: Եկավ ու ասաց՝ տիկին Խաչատրյան, կարդացի, շատ լավն էր, բայց մեր տանն ասացին՝ քո դասախոսը հաստատ դաշնակ է: Ասացի՝ կգնաք ձեր տանը կասեք՝ ես ոչ մի կուսակցության չեմ պատկանում, ես հայ եմ, և իրենք էլ են հայ: Դաշնակ լինելն ինձ համար բացասական չէ, թեկուզ լինեմ դաշնակ, ես հայ եմ, այսինքն՝ մարդիկ դեռևս այդ կուսակցական գաղափարախոսությամբ են շարժվում: Ես գիտեմ շատ արժեքավոր գրքեր ու շատ հեղինակներ, որոնք կուսակցական պատկանելության պատճառով այսօր չեն հանրայնացվում, և նույնիսկ թույլ չի տրվում նրանց մասին լավ խոսք ասել:

Քնարիկ Աբրահամյան. Գուցե ես շատ եմ բացարձակացնում երևույթը, բայց երբ որ մտնում եմ լսարան, առաջին բանը, որ ասում եմ ուսանողներին (կապ չունի՝ ուսանողը սովորում է բանասիրական ֆակուլտետում, թե՝ այսպես ասած, «դրսեցի է»՝ ֆիզիկոս է, մաթեմատիկոս է, օտար լեզուների կրող է, հոգեբան է), հետևյալն է՝ երեխաներ, գուցե շատ եմ ծայրահեղ, բայց ինձ համար հայի ինքնության մեկ բացարձակ ցուցիչ կա՝ լեզուն. ես հայ եմ, որովհետև խոսում եմ հայերեն: Կամ հայերեն եմ խոսում, որովհետև հայ եմ: Ասում եմ՝ ոնց ուզում եք՝ այդ հարաբերակցությունը ճշտեք ձեր մեջ: Ինձ համար լեզվի ընկալման ուրիշ կերպ չկա: Այո՛, որքան էլ ես օտար լեզու սովորես... Նախ՝ գերազանց իմանալ չի ստացվի: Ես մտածում եմ այսպես՝ որքան էլ փորձենք պատճառաբանել, թե՝ կներեք, մի քիչ հայերենից լավ չեմ, բայց անգլերենից լավ եմ, անհեթեթ է: Հայ մարդը, որ ծնվել է Հայաստանում ու անգլերեն ավելի լավ գիտի, քան հայերեն, լեզվի նկատմամբ արհամարհանքը ծածկելու ձև է փնտրում: Ուրիշ բան չկա: Դա առաջին, և երկրորդ, պարոն Դանիելյանի հետ մոտ մեկ ամիս առաջ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում մասնակցում էինք քննարկման, ընթացքում մի երեխա, որ լիբանանահայ էր, ներկայացնում էր այն տեսլականը, որ տիկին Խաչատրյանը ձևակերպեց իբրև պետական հոգածություն: Երեխան ասում էր՝ եթե արևմտահայը մտներ մեր նախարարություններից որևէ մեկը, գրեր և՛ իրեն հարազատ դասական ուղղագրությամբ, և՛ իր լեզվով՝ արևմտահայերեն, ու պատասխան ստանար նույն կերպ, ապա շատ ավելի բաց երկխոսություն կձևավորվեր մեր երկու միջավայրի միջև: Ավելին, շատ լավ կլիներ, որ այն մարդը, ով Ազգային ժողովում կամ կառավարությունում նաև մեր ճակատագիրը պիտի որոշի, ինքը քննություն հանձներ հայերեն լեզվից: Եթե չի բավարարում պահանջվող մակարդակը, ապա իրավունք չպիտի ունենա պետության մեջ կարևոր պաշտոն զբաղեցնել, նաև պատգամավոր կամ նախարար լինել: Հակառակ պարագայում և նախևառաջ վիրավորվում է մեր ինքնությունը, իսկ լեզուն ինքնություն է:

Սուրեն Դանիելյան. Ինքը՝ պետական հոգածությունը, խարդախ բան է: Անկեղծ եմ ասում՝ պետական հոգածություն 70 տարի ունեցանք, այդ նույն պետությունը խժռում էր իր լավագույն զավակներին: Մենք կաշառակերության, լճացման ահավոր վիճակների մեջ էինք...

Քնարիկ Աբրահամյան. Պետպատվեր կա, բայց գիտե՞ք պետպատվերում ինչն է գլխավորը՝ թարգմանական գրականությունը: Շատ լավ է, որ աշխարհի հետ հաղորդակից լինենք, բայց... Եթե դուք գնաք-տեսնեք՝ գիտության մեջ ինչ բովանդակության մրցույթներն են ֆինանսավորվում, կհամոզվեք, որ մենք՝ հայագետներս, գրեթե շանս չունենք:

Լևոն Սահակյան. Մեր զրույցի ընթացքում ես նկատեցի՝ բոլորս խոսում ենք նույն ցավից, բայց էլի խոսում ենք բուժման տարբեր մեթոդների մասին... Ասում ենք՝ ինչպե՞ս որոշել՝ սա իսկակա՞ն գրական արվեստ է, թե՞ ոչ: Այդպիսի օրենք, կանոն չկա, չի էլ կարող լինել աշխարհում: Վերցրեք որևէ գիրք և կտեսնեք՝ նույնիսկ մասնագետները տարբեր կարծիքներ կհնչեցնեն: Իսկական գրականությունն այն է, որ հետաքրքրություն և հույզեր է առաջացնում ընթերցողների շրջանում ու գնահատվում մասնագետների կողմից:

Վարուժան Գալստյան. Բարձրակարգ է այն գրականությունը, որն ավելի շատ են ընթերցում...

Սուրեն Դանիելյան. Ինչպե՞ս կարողացան 20-րդ դարում որոշել, որ Դոստոևսկին հզորագույնն է բոլոր ժամանակների մեջ... Գրողներ կան, ովքեր համաշխարհային ճանաչում ունեն և վերջ, բոլորը գիտեն, որ նրանք մեծություն են:

Թարգմանությունների հարցը... Ամենամեծ բանը անփութությունն է, որ կա մեր թարգմանական գրականության մեջ: Թարգմանում են ռուսերենից, ներկայացնում՝ իբր անգլերենից են թարգմանել:

Աշոտ Գալստյան. Նախ՝ մայրենի լեզվի մասին, այն լեզվի, որով անհատը մտածում է: Ես շատ եմ կարևորում այդ խնդիրը՝ ո՞րն է մարդու համար մայրենի լեզուն. այն լեզուն է, որով մարդը մտածում է: Եվ պետական հոգածությունը, որ մենք առաջնային ենք դասում, այո՛, կարևոր է լեզվի մաքրության հարցում: Բայց ես միայն չեմ հենվում պետական հոգածության վրա, ես կարծում եմ անհատը պիտի լինի դոմինանտ և շահագրգիռ: Պետության, անհատի կողքին նաև ընտանիքը պետք է լինի: Պետք է կարողանա այս եռանկյունին գործել, որպեսզի մեր լեզուն մաքրվի ախտից: Ծնողներն էլ պետք է իրենց ձեռքերը չլվանան, որովհետև 21-րդ դարում մենք՝ մանկավարժներս, զգում ենք՝ ծնողները, կարծեք (տարրական դպրոցի մասին չէ խոսքը, որտեղ շատ ակտիվ են ծնողները), միջին դպրոցից հետո չեն հետաքրքրվում իրենց զավակների կրթությամբ: Մինչդեռ ծնողները պետք է ամուր կանգնեն իրենց զավակների կողքին և կարողանան ուղղորդել դեպի լուսավոր հորիզոններ, հիշենք Ռաֆֆու խոսքը՝ «Տվեք ինձ կիրթ ու խելացի մայրեր, ես ձեզ կտամ կիրթ ու խելացի հասարակություն»:

* * *

Սամվել Ալեքսանյան. *Բարեկամներ, ժամանակի սղության պատճառով ավարտում ենք կլոր սեղան-քննարկումը, չնայած մեզ մտահոգող հարցերը չսպառվեցին:*

Կարծում ենք, այդուհանդերձ, կլոր սեղան-քննարկումը կայացավ բարձր մակարդակով:

Մեր խմբագրակազմի, մեր ընթերցողների անունից անկեղծ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ մեզ ընդառաջելու և նման օգտակար քննարկման մասնակցելու համար:

Հավատում ենք՝ այս կլոր սեղան-քննարկումը նախադեպ կհանդիսանա, և հետագայում նույնպես՝ մեր լսարանին հետաքրքրող հարցերի շուրջ քննարկումներ ու բանավեճեր կունենանք մայրաքաղաքից Սյունիք ժամանած գիտնականների և մասնավորապես հայագետների հետ:

Աստված Ձեզ պահապան:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՍՂԱԳՐԵՑ ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ

ԿԱՊԱՆԻ ՏՈՐԹՆԻՈՒՄ ԴԱՐԵՐՈՎ ՇՐՋԱՆԱՌՎՈՂ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑԸ՝ **Հայկի և Բելի ճակատամարտն Ինջաբելում է տեղի ունեցել**

Հայկ նահապետի և բաբելոնյան առաջնորդ Բելի ճակատամարտի, նաև Բելի մահվան մասին մեզ պատմում է Պատմահայր Խորենացին՝ «Հայոց պատմություն» կոթողային աշխատությունում՝ հիմք ընդունելով Մար Աբասի պատումները: Պատմահայրը ցույց է տալիս նաև, թե որտեղ են երկու հսկաները Ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ին բախվել՝ «մի ծովակի ափ, որն ունի աղի ջուր և մանր ձկներ», «բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ...»:

Ոչ թե Խորենացին կամ Մար Աբասը, այլ «Հայոց պատմության» ծանոթագրության հեղինակները Վանա լիճն են համարում այն ծովակը, որն ունի աղի ջուր ու մանր ձկներ: Եվ այդ բոլորով հանդերձ՝ Հայկի ու Բելի ճակատամարտի մասին մի ավանդազրույց է շրջանառվում Կապանի տարածաշրջանի Անտառաշատ (Տորթնի) գյուղում:

Ավանդազրույցն առնչվում է Ինչաբել կամ Ինջաբել կոչվող հարթ, ընդարձակ տարածությանը, որը ծովի մակերևույթից 2040-2300 մ բարձունքների արանքում է: Բարձր լեռների միջև ընկած այդ վայրն Անտառաշատ, Տանձավեր, Մալդաշ գյուղերի վարչական տարածքների միացքում է, Բարգուշատի լեռնաշղթայի Աճանան (Տափասար, Թափասար) լեռնագագաթից դեպի հյուսիս-արևելք:

Կապանի տարածաշրջանում ճանաչված մտավորական, Կապանի և հատկապես Աճանանի ձորի գյուղերի պատմության խորագիտակ Գրիշա Խաչատրյանի վկայությամբ՝ գյուղի տարեցները դեռևս 1980-ական թվականներին էին պատմում իրենց նախնիներից լսած այդ զրույցի մասին: *Եվ ուրեմն՝ ըստ տորթնեցի պապերի ու նախապապերի՝ Հայկի և Բելի նշանավոր մարտը տեղի է ունեցել հենց Ինչաբելում (Ինջաբելում): Իբր մենամարտի ամենաթեժ պահին Հայկը զայրացած ու գազազած դիմել է Բելին՝ հարցնելով ու նախատինք տալով՝ «Ի՞նչ է, Բե՛լ, դե հիմա խոսիր, ի՞նչ ես ուզում, ի՞նչ ես մոռացել այստեղ, Բե՛լ...»: Տեղանունն էլ, այդ ամենից հետո, կոչվել է Ինչեբել կամ Ինչաբել կամ Ինջաբել...*

Իհարկե, որևէ մեկս ի զորու չենք կասկածի տակ առնելու Քերթողահոր պատմածը, բայց և չենք կարող անտարբեր անցնել այդ ավանդազրույցի կողքով՝ հազարամյակների խորքից եկող ու Տորթնիի նախնիներից մեզ փոխանցված: Ամենայն հավանականությամբ այդ ավանդազրույցի հիմքում առնվազն պատերազմական իրադարձություն կամ օտար նվաճողների հետ ռազմական բախման մի խոշոր իրողություն է ընկած, ընդ որում՝ ռազմական այդ բախումն այնպիսի նշանակություն է ունեցել, որ մեր նախնիները համեմատել են Հայկի ու Բելի ճակատամարտի հետ:

Այդ ավանդազրույցը հազարերորդ անգամ ցույց է տալիս նաև, որ դարերի ընթացում Սյունիքում է վճռվել հայոց ճակատագիրը, ինչն այսօր որևէ մեկը մոռանալու կամ դրանից դասեր չքաղելու իրավունք չունի: Զարմանալի չէ, որ տորթնեցիները դարեր շարունակ հավատացել են այդ զրույցին ու հպարտացել, որ հայոց աշխարհը նվաճել կամեցող Բելը ջախջախվել է հենց Ինչաբելում:

* * *

2023-ի հուլիսի 5-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այցելեց Ինչաբել, ապա բարձրացավ Աճանանի (Տափասարի կամ Թափասարի) լեռնագագաթ:

Մեզ ընկերակցում էին երկու երևելի այրեր՝ Գրիշա Խաչատրյանն ու Սմբատ Երեմյանը: Գրիշա Խաչատրյանը հանգամանալից պատմում էր այդ վայրերի հետ Զորավար Անդրանիկի, Գարեգին Նժդեհի և Պողոս Տեր-Դավթյանի առնչությունների մասին:

Այդ վայրերում լինելուց հետո միայն կարելի է հասկանալ, թե ինչո՞ւ էր Գարեգին Նժդեհը 1918-20 թթ. Զանգեզուրյան հերոսամարտի ժամանակ հայկական ուժերի գլխավոր հենակետերից մեկը դարձրել Ինչաբելը: Այդտեղից տեսանելի են և՛ Մեծ Իշխանասարն ու Գլուխ Զագեձորոն, և՛ Եռաբլրի սարահարթն ու Գորիսի բազմաթիվ գյուղեր, և՛ Կապանի Աճանանի ձորի գյուղերն ու Երիցվանքը, և՛ Շուռնուխն ու Խուստուփը: Բայց առավել լավ ու ամբողջական երևում է (հարավից) Կապանի տարածաշրջանի գեղեցկագույն լեռնագագաթներից մեկը՝ Կատարը (3012 մ)՝ մերձակա հարսնաքարով, նաև Խուստուփի ու Կատարի միջև գտնվող Կոմբախ լեռնագագաթը (Խուստուփ լեռնազանգվածի հյուսիսային ճյուղավորության գագաթն է, Բեխ գյուղից հարավ-արևմուտք):



Մենք տպավորվեցինք նաև հարուստ բուսականությամբ: Աշխարհի բոլոր ծաղիկները, կարծեք, ժամադրվել ու հավաքվել էին Ինջաբելում, իսկ նրանց անդորրը հսկում էին երկնային իրենց թագավորությունում անընդհատ հերթապահող արծիվները:

Տպավորվեցինք առատ խոտածածկով, անեզր արոտավայրերով: Մեղվաբուծության, անասնապահության, դեղագործության համար բացառիկ նպաստավոր այդ վայրերը, սակայն, չեն օգտագործվում ըստ նշանակության և հնարավորությունների, ինչը, բնականաբար, ափսոսանքի տեղիք է տալիս:

Վերջում կանգ առանք Աճանան լեռան հյուսիսարևմտյան կողմում գտնվող մի տափարակում, որ հայտնի է իր խաչքարով կամ ֆալլոսի պաշտամունք հիշեցնող խորհրդանիշ-քարով (2626 մ բարձրությամբ լեռնագագաթ Բարգուշատի լեռնաշղթայի արևելյան մասում, Գորիսի և Կապանի շրջանների սահմանագլխին, Մալդաշ գյուղից հարավ-արևմուտք): Անտառաշատցիներն այդ վայրը կոչում են Խաչի քար, իսկ մալդաշցիները՝ Խաչերի դաշտ: Այդտեղից պարզորոշ երևում է քիչ հեռավորության վրա գտնվող Մալդաշ (Քաշունի) գյուղը: Եվ ուրեմն չէինք կարող չհիշել Պողոս Տեր-Դավթյանին: 1920 թ. հոկտեմբերի 21-23-ին Նժդեհի կողմից Ինջաբելում պարտություն կրած բոլշևիկյան զորքերը հենց այդ վայրով էին նահանջում դեպի Մալդաշ: Սակայն այնտեղ վրա է հասնում Պողոս Տեր-Դավթյանի գլխավորած սիսիանյան հեծելազորը, որն էլ վերջնականապես ջախջախում է նրանց:

Ինջաբելից վերադարձանք Տափասարի և Կատարի միջև ընկած հեքիաթային անտառով, որը, առանց չափազանցության, ոչ միայն Կապանի ու Սյունիքի, այլև համայն Հայաստանի ամենագեղեցիկ անկյուններից է: Զբոսաշրջության համար դժվար թե մեզանում գտնվի այնպիսի մեկ այլ վայր, ինչպիսին Աճանանի ձորն է՝ Աճանան կամ Նորաշենիկի ջուր անվանյալ գետակով, անտառներով ու երկնքի հետ զրույցի բռնված լեռնագագաթներով, անզուգական բուսական ու կենդանական աշխարհով, սառնորակ աղբյուրներով...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Լորը՝ «... Իմ կանաչ Լորը, Իմ փառավորը, իմ բախտավորը»

Երեսուն տարի առաջ՝ 1993 թ. հուլիսի 17-ին, վախճանվեց Համո Սահյանը...

1993թ. հուլիսի 21-ին հայ հասարակությունը վերջին հրաժեշտը տվեց մեծ բանաստեղծին: Հանգուցյալի դագաղը դրված էր Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի ճեմասրահում:

Այնուհետև սգո թափորը շարժվեց դեպի Կոմիտասի անվան զբոսայգի, որտեղ կայացավ սգո հավաք: Խոսք ասացին ՀԳՄ նախագահ Վահագն Դավթյանը, արձակագիր Հրանտ Մաթևոսյանը, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, Սիսիանի շրջխորհրդի նախագահ Սամվել Սահակյանը, ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը:

Ընթերցվեցին ստացված ցավակցական հեռագրերը՝ Վրաստանի Գխ նախագահ Էդուարդ Շևարդնաձեից, Վրաստանի և Ռուսաստանի գրողների միություններից, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանից, Համո Սահյանի ծննդավայր Լոր գյուղի բնակիչներից: Եվ սգո մեղեդիների հնչյունների ներքո մեծ բանաստեղծի աճյունն իջեցվեց գերեզման:

* * *

Համո Սահյանի ստեղծագործությունների ակունքը Սյունիքն է, աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր դիտակետն էլ Սյունիքն է: Ինքն էր ասում՝ «...Եթե նկատի ունենք պատմական Սյունիքը, ապա նա միակ և հիմնական ակունքն է, ինձ համար աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր և հուսալի դիտակետը: Նաև այն հավելյալ իրականությունը, որ պահպանել է իմ ինքնությունը այս խառն ու խրթին աշխարհում»:

Շատ էր սիրում իր ծննդավայրը՝

«Լուսնի վրա՝ տուն ու այգի,
Մարսի վրա գահ ունենա,
Ուր էլ մնա, ինչ էլ անի,
Համո Սահյանն իր Լորինն է»:

Հուլիսի 17-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այցելեց Լոր՝ Համո Սահյանի հայրական տուն. Սամվել Ալեքսանյանն էր, ճանաչված մտավորական և լրագրող Գագիկ Հայրումյանը...

Գյուղ հասանք Դարբասի ձորով ու հիշեցինք, թե ինչ էր զգում բանաստեղծն այդ վայրերը մտաբերելիս՝

«Երբ ամեն անգամ բացվում է օրը,
Մտքով մտնում եմ Դարբասի ձորը...
Կարծես լսում եմ մորս օրորը...
Երբ սոսափում է ծանոթ բարդին:
Դեմս փռվում է իմ կանաչ Լորը,
Իմ փառավորը, իմ բախտավորը...»:

Տիկին Հասմիկը՝ բանաստեղծի քույրն այլևս չկա, ով նման առիթների դեպքում գալիս էր Դարբասից և միանում «Սյունյաց երկրի» ստեղծագործական խմբին:

Տուն-թանգարանում էին «Սիսական»

Շարունակությունը՝ էջ 8

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՏԱՃԱՐՈՒՄ՝

Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ձեռնադրություն էր

16 ՀՈՒԼԻՍԻ 2023 Թ., ԺԱՄԸ 10.30, ԳՈՐԻՍԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ...

Հնչում են եկեղեցու զանգերը, որով և ազդարարվում է հարյուրավոր ուխտավորների մասնակցությամբ տեղի ունեցող տոնակատարության սկիզբը...

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Սյունյաց թեմի առաջնորդանիստ եկեղեցին է, կառուցվել է 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին: Ավանդազրույցը պատմում է, որ եկեղեցին կառուցվել է այն վայրում, որտեղ ժամանակին փոքրիկ մի վկայարան է կառուցել Բարդուղիմեոս առաքյալը: Ստեփանոս պատմիչն է նաև հիշեցնում՝ *«Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատական և անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները»:*

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման հաջորդ փուլն իրականացվեց 1988-97 թթ., երբ ծնունդ առան նաև գմբեթն ու սուրբ խորանը:

1997-ի դեկտեմբերի 20-ին հանդիսավոր պատարագով ու օծման արարողությամբ, ինչպես և Հայոց հովվապետ Գարեգին առաջինի հայրապետական օրհնությամբ վերաբացվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

* * *

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության կամ Վարդավառի տոնի մասին, որ տեղի ունեցավ այսօր:

Ըստ Մաթեոս ավետարանիչի՝ ...Եվ վեց օր հետո Հիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին և նրանց հանեց, առանձին, մի բարձր լեռ և նրանց առաջ պայծառակերպվեց:

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու հինգ տաղավար տոներից է, որն այս տարի տոնում ենք հուլիսի 16-ին: Այն հիշատակությունն է Հիսուսի՝ Թաբոր լեռան վրա Իր երեք աշակերտներին՝ Հովհաննեսին, Հակոբոսին և Պետրոսին Աստվածային փառքով երևման, որը նկարագրում են Ավետարանները:

Իր քարոզչության երրորդ տարվա ամռանը Հիսուս, աշակերտներից ընտրելով Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, նրանց հետ բարձրանում է Թաբոր լեռը՝ աղոթելու. «...լեռ ելավ աղոթքի կանգնելու» (Ղուկ. 9; 28): Երբ աղոթքի կանգնեց և Հոր հետ էր, հանկարծ «Նրա երեսի տեսքը այլակերպվեց» (Ղուկ.9;29), և Հիսուս աշակերտներին երևաց Իր աստվածային փառքով: Այստեղից և տոնի անունը՝ «Այլակերպություն» կամ «Պայծառակերպություն», որը նշանակում է «կերպարանափոխություն»:

Քրիստոնյա բոլոր Եկեղեցիները տոնը Այլակերպություն անունով են նշում, և միայն Հայ Եկեղեցին է այն անվանում նաև Պայծառակերպություն՝ շեշտելով Քրիստոսից ճառագող աստվածային փառքն ու փայլը:

Քրիստոսի Պայծառակերպության տոնի խորհուրդը Աստծո պատվերն է. *«Դրան լսեցեք»,* – որը հաստատում է ճշմարտությունը, որ Հիսուս Աստծո «սիրելի Որդին է»: Առաքյալներին ուղղված այս խոսքը պատգամ է ողջ մարդկային ցեղին, բոլոր ժամանակներում: Սա է Պայծառակերպության տոնի թելադրանքը, դրա խորհրդի բանալին. սիրել Աստծուն, լսել Նրա պատվիրանները, հետևել դրանց, կյանքի վերածել Նրա պատգամները, որոնք մարդկանց երջանկության և ժողովուրդների խաղաղության գրավականն են:

* * *

Սուրբ Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ. S.S. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն, Գերաշնորհ Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն:



Քահանայական ձեռնադրության և օծման արժանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարբեր կառույցներում և թեմերում սպասավորող երեք սարկավագ:

Կարգի համաձայն, ձեռնադրվող երեք քահանաները ծնկաչոք բարձրացան ավագ խորան, ապա աղոթքների ու շարականների ուղեկցությամբ, դառնալով դեպի ժողովուրդը, ձեռքերը վեր պարզեցին՝ հրաժարվելով աշխարհիկ կյանքից: Հետո խորան բերվեց սրբալույս մյուռոնը, որով ձեռնադրող Գերաշնորհ Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանն օծեց ընծայվողների ճակատները, ձեռքերի ափերը՝ նոր անուններով նրանց քահանայության կոչելով:

Նորաօծ քահանաները ստացան հոգևոր անուններ՝ Գևորգ Կաղեյանը՝ Տեր Պետրոս, Դավիթ Սահակյանը՝ Տեր Մովսես, Արման Իսահակյանը՝ Տեր Հակոբոս:

Ձեռնադրությունից հետո նորընծա քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին: Ապա խորան բարձրացան Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ, հոգեշնորհ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը և մյուս հոգևորականները, ովքեր համբուրելով նորաօծ քահանաների ճակատները, շնորհավորեցին նրանց:

Թեմի առաջնորդական տեղապահը շնորհակալություն հայտնեց Վեհափառ հայրապետին, որ իր օրհնությամբ և տնօրինությամբ Սյունյաց թեմում, Վարդավառի տոնի առիթով, տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն, ինչը բացառիկ իրադարձություն է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր կյանքում:

Հոգեշնորհ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց նաև Գերաշնորհ Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանին և Մայր աթոռի միաբան հայրերին՝ ձեռնադրությունն ըստ պատշաճի և կարգի կազմակերպելու համար:

Շնորհավորանք և բարեմաղթանքներ ուղղվեցին նաև ներկաներին ու Սյունիքի ամբողջ հավատավոր ժողովրդին՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի առիթով: Ձեռնադրությանը ներկա էին Գորիսի տարածաշրջանի հոգևոր հովիվներ, արժանապատիվ Տեր Ահարոն քահանա Մելքումյանը և արժանապատիվ Տեր Տիգրան քահանա Հակոբյանը, ինչպես և Որոտնավանքի հոգևոր հովիվ, արժանապատիվ Տեր Դավիթ քահանա Գիշյանը:

* * *

Սյունիքի մարզում իրականացվող ամառային զորակոչի հերթական օրը համընկել էր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության կամ Վարդավառի տոնին: 32 նորակոչիկ Կապանի տարածաշրջանից էին մեկնում հայոց բանակ, 14-ը՝ Գորիսի տարածաշրջանից:

Գորիսեցի նորակոչիկները, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնակատար, փոխգնդապետ Արմեն Հարությունյանի գլխավորությամբ, նույնպես Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում էին: Արմեն Հարությունյանի վկայությամբ՝ Գորիսից հայոց բանակ մեկնողներն ավանդաբար այցելում են այս սրբավայր և միայն հայ առաքելական եկեղեցու օրհնությունը ստանալուց հետո ճամփա ընկնում:

Գորիսի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Ահարոն քահանա Մելքումյանն իր օրհնությունն ուղղեց նորակոչիկներին՝ մաղթելով հոգու կորով, ամուր հույս և հավատ առ Աստված:

* * *

Տոնական օրը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ մոմավառության էր եկել նաև ՀՀ ՁՈՒ հատուկ նշանակության բանակային կորպուսի հրամանատար Արմեն Գյոզալյանը: Նրա ներկայությունը, ինչպես և կարելի էր սպասել, անտարբեր չթողեց շատ գորիսեցիների, ովքեր ջերմորեն շնորհավորեցին հրամանատարին՝ գեներալ-մայորի զինվորական կոչման արժանանալու կապակցությամբ:

Արմեն Գյոզալյանը մեր հանրապետությունում համբավ ու ճանաչում ձեռք բերեց հատկապես Տեղ գյուղի մատույցներում այս տարվա ապրիլի 12-ի ռազմական բախումից հետո: Հայոց սահմանապահ հենակետի վրա (օրը ցերեկով) հարձակվող ազերի ասկյարներին դեմառդեմ դուրս էր եկել հրամանատարը և գլխավորել ագրեսոր խմբին հետ շպրտելու գործը: Ճիշտ է, այդ մարտում կորցրինք մեր լավագույն զինվորականներից չորսին, ինքը՝ հրամանատարն էլ վիրավորվեց, բայց մեր քաջերը ցույց տվեցին, որ թշնամու ցանկացած սանձարձակություն հետայսու արժանանալու է համարժեք պատասխանի:

* * *

Տոնական օրը եզրափակվեց մատաղի արարողությամբ և մշակութային միջոցառումներով:

Ահա այսպես նշվեց Պայծառակերպության տոնը Գորիսում, որը յուրովի ցույց տվեց, որ թուրք-ազերիների կողմից անդամահատված Սյունիքը հոգևոր արթնություն է ապրում, որ Սյունիքը Բարձրյալի օրհնությամբ վերականգնում է իր արժանապատիվ ընթացքը, որ սյունեցիները՝ Քրիստոսի լույսով պարփակված, հայրենատիրությունը կրկին ու նորից փորձում են դարձնել ապրելու կերպ:

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Լորը՝ «... Իմ կանաչ Լորը, Իմ փառավորը, իմ բախտավորը»

Սկիզբը՝ էջ 6

ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը, ճանաչված գեղանկարիչ Աշոտ Ավագյանը, Լորի վարչական ղեկավար Դավիթ Առուստամյանը: Մեզ դիմավորեց թանգարանի տասը տարվա տնօրենը՝ Քնքուշ Հարությունյանը, ով չափազանց դրական տպավորություն թողեց: Նախ, ինչպես տեսանք, տուն-թանգարանը պահպանվում է պատշաճորեն, իսկ ինքը՝ տնօրենը, թանգարանի ցուցադրությունները ներկայացնելիս հաճախ էր իր խոսքը համեմում Համո Սահյանի բանաստեղծություններով:

Տեղեկացանք, որ վերջին տարիներին բազմապատկվել է տուն-թանգարան այցելողների, Համո Սահյանի պոեզիայով հետաքրքրվողների թիվը, թեև լուսահոգի Շչորս Դավթյանից հետո որևէ ուշագրավ ձեռնարկ չի հրատարակվել Համո Սահյանի գրական ժառանգությունից:

Տուն-թանգարանում, բնականաբար, խորասուզվեցինք սահյանական պոեզիայի օվկիանոսի մեջ, հիշեցինք նրա առանձին ստեղծագործություններ, որոնք հայ մարդու ուղեկիցն են լինելու հավերժի ճանապարհին:

Մեր գրականագետներից ու գրական մեծերից շատերն են այդ հանգամանքը փաստել:

Նման գնահատողներից մեկի՝ սփյուռքահայ գրող Անդրանիկ Ծառուկյանի խոսքը. *«Համո Սահեան... Հայրենիքի հողն է, ջուրն է, թոնիրին հացը, ծառերուն սօսափը, հովերուն, ջուրերուն, յոգնած մարդուն հառաչը, սիրող զույգին ծիծաղը, մահացեալին յիշատակը, նորածինին ճռուողիւնը: Ինքը, մինակը, միակ, միայնակ՝ ամփոփված հայրենիք մը՝ է, միանձնացած հայութիւն մը...»:*

Այնուհետև այցելեցինք Համո Սահյանի ծնողների՝ Սահակ դայու և Գայանե մայրիկի շիրմին:

Գերեզմանում ավանդական կարգով ոգեկոչեցինք նրանց հիշատակը, իսկ Քնքուշ Հարությունյանն արտասանեց բանաստեղծի գործերից մեկը՝

«Դագաղիս համար դուք ծառ չկտրեք».

Դագաղիս համար
Դուք ծառ չկտրեք:
Ինձ մի հին կոճղի
Փչակում դրեք,-
Անտառի եզրին,
Բլուրի վրա:
Որ գնամ գտնեմ
Արմատը նրա,
Որ գնամ նրա
Արմատը գրկեմ...
Եվ ի՞նչ իմանաս,
Գուցե թե մի օր
Դեպի լույս աշխարհ
Մի շյուղ արձակեմ:

Գերեզմանում էինք, երբ մայրաքաղաքից հեռաձայնեց բանաստեղծի որդին՝ Նաիրի Սահյանը և օրվա առիթով մտքեր փոխանակեց Դավիթ Առուստամյանի և Սամվել Ալեքսանյանի հետ:

Այնուհետև այցելեցինք Լորի հին դպրոցի շենք, որտեղ դասավանդել է Ակսել Բակունցը, որտեղ կրթություն է ստացել Համո Սահյանը, որ կառուցել են Գասպար Տեր-Մարգարյանը՝ Կապանի Շրվենանց գյուղից և իր կինը՝ Շուշանիկ Տեր-Մարգարյանը՝ Լորից:

Այցելեցինք մեծ բանաստեղծի սիրելի ուխտավայր՝ Ծառու Սուրբ Հովհաննես եկեղեցի (Լորի և Շենաթաղի միջնամասում), որը ծառի ու ջրի հեթանոս պաշտամունքի հետ կապված նշանավոր ուխտատեղի է եղել առնվազն Ծղուկ-Սիսիան գավառում:

Այցելեցինք գյուղի մուտքի մոտ գտնվող Սպիտակ խաչը կամ Լորիկի խաչը. 1271 թ. կանգնեցված այդ մահարձանը պահպանվել է սկզբնական տեսքով՝ չկորցնելով իր հմայքը:

Մեր վերջին կանգառը Դարբաս գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու մերձակայքն էր, որտեղ Համո Սահյանի «Իմ պապը» բանաստեղծության մոտիվներով՝ մեծ սյունեցի Գետիկ Բաղդասարյանի ձեռամբ կերտված քանդակն է, որ նաև գերդաստանի նահապետի՝ Խաչիպապի կերպարի ընկալումն ունի:

Լորից վերադարձանք հարստացած, գոտեպնդված և համոզված՝ հայ ժողովուրդը ելնելու է ներկա ծնկաչոք վիճակից, հայոց աշխարհի ամենահայոց երկրամասը՝ Արցախը, շարունակելու է երթը դեպի գալիք:

Համո Սահյանն էլ էր մեր վաղվա օրվա հավատավորը, այլապես Հայրենիքի խորհրդանիշ բանաստեղծը վստահորեն չէր հռչակի՝

«Եթե մինչև անգամ մեջքս
ծալված լինի,
Եթե մինչև անգամ ոտքս
վառված լինի,
Եվ ճակատիս հազար հողմի
հարված լինի,
Միևնույն է, կգամ, ուր էլ
լինեմ, կգամ:
Գետնի տակից կգամ,
Մի հեռավոր, անհայտ
մոլորակից կգամ...»:

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հ.Գ. *Օրը սահյանական էր... Եվ ի սկզբանե նպատակ չունեինք անդրադառնալ խնդիրներին, որոնց ականատես էինք դառնում Լորում: Սակայն հաճախ չէ, որ «Սյունյաց երկիրն» այցելում է այդ գյուղ, ուստի և ավելորդ չհամարեցինք ուշադրություն հրավիրել մի քանի հարցի վրա, որոնք, մեղմ ասած, մեզ ցավ պատճառեցին:*

Գրեթե ամեն օր սյունիքյան միջավայրում ականատես ենք լինում միջոցառումների, նաև շոուների՝ կազմակերպված ինչ-ինչ չնչին կամ աննշանակ առիթներով: Սակայն հայոց մեծ քնարերգուի մահվան 30-ամյակի առիթով հիշատակի արարողություն չկազմակերպվեց ոչ մարզի և ոչ էլ Սիսիան համայնքի մասշտաբով: Երկու պատճառ կարող է դա ունենալ՝ կամ տվյալ գործին կոչված մարդիկ իրենց տեղում չեն կամ էլ այդ մարդիկ՝ գոնե դպրոցական մակարդակով, այդպես էլ չգիտեն, թե ով է Համո Սահյանը:

Մի ուրիշ տարօրինակ երևույթ էլ՝ Լորի հանրակրթական դպրոցը տասնամյակներ շարունակ կրել է Ակսել Բակունցի անունը, ով ժամանակին ուսուցչություն է արել այդ դպրոցում: Բայց հայ արձակի նահապետի անունը դուրս է մղվել դպրոցի անվանումից: Դա տեղի է ունեցել 2006-ին, երբ 8-ամյա դպրոցին տրվել է միջնակարգի կարգավիճակ: Ուղղակի ամոթ է. քանի-քանի ոչնչություններից կուռքեր ենք հորինում, բայց Բակունցի անունը ջնջում ենք: Գոնե հիմա հետամուտ լինենք՝ դպրոցին վերադարձնելու գրողի անունը:

Մեզ ցավ պատճառեց այն վիճակը, որ ստեղծվել է հին դպրոցի շենքի բակում՝ գյուղ մտնող ճանապարհի արևմտյան ափին՝ հենապատից անմիջապես վերև գտնվող գերեզմանատանը: Տասնյակ ննջեցյալների ոսկորներ՝ հողից դուրս ցցված... Եվ սահմռկեցուցիչ այդ տեսարանին ամեն օր ականատես են լինում և՛ գյուղաբնակները, և՛ գյուղ այցելողները: Եվ, իհարկե, հին գյուղի դպրոցական շենքը, որտեղ դասավանդել է Ակսել Բակունցը, որտեղ սովորել է Համո Սահյանը... Շենքի ներսն իսկական աղբավայր է դարձել, որի մաքրման համար մի քանի հոգու երկու-երեք ժամ տևող ջանք է պահանջվում, բայց...

Գյուղի ներկայիս վիճակը... Վերջին ամիսներին բնակավայրը (ինչպես և ենթաշրջանի մյուս գյուղերը) մեծ վնաս են կրել կարկուտից ու հորդառատ անձրևներից՝ մարդկանց ամբողջապես զրկելով ակնկալվող բերքից: Մինչդեռ, ինչպես վկայում է գյուղի վարչական ղեկավար Դավիթ Առուստամյանը, այդ վնասները դեռևս չեն գնահատվել ու առայժմ խոսք չկա փոխհատուցման մասին. հետաքրքիր է՝ այդ գործով ո՞վ պիտի զբաղվի, որ չի զբաղվում:

Համո Սահյանի հիշատակը չենք ոգեկոչում, գյուղին հասած վնասները չենք վերականգնում, բա ուրիշ ինչո՞վ ենք զբաղված...

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1045, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 15.08.2023թ.: